



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


1(494)

- 93



3

Ա 9 Հրանտակայիս Յովհաննես Գուրգանի Ա 9



Ս. ՌՈՒՍՈՎԱ

ԶԻՒՑԵՐԻԱ
ԱԶԵՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԻՆ

Թուրքական Ս. Տէր-Անանեան

ԹԵՐԵԼԻ

1906

321(494)
P-93

26 SEP 2005

32(494)

п-93

49
uf

№ 9 Հրատարակութիւն Յովհաննես Դաւթեանի № 9

Ա. ՌՈՒՍՈՎԱ

ԶԵԿՑԵՐԻԱ ԱԶԱՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՆՐԵՊԵՏՈՒԹԻՒՆ

Թարգմ. Ա. Տէր-Անանեան



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեբըշչառ սպարան «ՀԵՐՄԱՆ» Ընկ. Մադարեան փող. № 5
1906 (179)





925

42

ԶԻՒՑԵՐԻԱ

ԱԶԱՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

I

Զւիցերիան—ազատութեան երկիր է: Հեռաւոր մուլթ անցեալներում, երբ Եւրոպայի ըստ-լոր ազգերը հեծում էին իշխանաւորների ու հարուստ տէրերի ճնշումների տակ,—զւիցերացիք ըմբոստ ու որոշակի մերժեցին որևէ է իշխանութիւն իրենց վրա և ինքններն սկսան կառավարել երկիրը: Իրեն շրջապատող Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի հզօր բռնակալների արանքում փոքրիկ Զւիցերիան իրեն ազատ յայտարարեց. բարձր լեռներն իրենու անմատչելի ամբութիւններով հովանաւորում էին նրա կամքն ու անկախութիւնը. խոր անդունդներն ու ահաւոր կիրճերը պահակներ էին ժողովրդի ազատութեան. Զւիցերիայի հովիտները—ազատ մաքի ու ազատ խղճի որբանն են դրանք. յայտեղ է աճել, զօրացել ժողովրդական անկախ ողին և իրաւունքը նրա ինքնավարութեան: Ազատական յամառ պայքարի դարեր անցան, և զւիցերական ժողովրդի ազատութիւնը պահպանում է պետական այն-

պիսի կազմով, որին նախանձել միայն կարող է եւրոպական ամեն ազգ, որ մինչև այսօր օգտառմ է միայն ցնորական ազատութեամբ, աւելի խօսքով, քան իսկապէս: Մինչդեռ զւեցերացիք կարող են իրենք իրենց հպարտութեամբ ասել. «Մենք մի առանձին ազգ ենք. ամեն մարդ ազատ է մեզնում: Մենք ոչ արիստոկրատիա ունենք, ոչ ծայրայեղ աղքատութիւն, ոչ մշտական զօրք: Մենք ամենքի համար պարտաւորեցուցիչ լեզու, կրօն չունենք. ոչ էլ պետական հարկեր ունենք: Մեր ամենաբերրի հողերը երկու-երեք բախտաւոր տիրապետողների ձեռքին չեն ընկած անօգուտ. մեր ամեն տասէն իննը մարդը տիրում են այն հողը, որ իրենք վարում ու ցանում են: Մեր հանրապետութիւնը—հաւասար մարդկանց դաշնակցութիւն է, ոչ թէ մի զօրաբանակ՝ գեներալներից ու նրանց հպատակ հասարակ զինուորներից բաղկացած: Մենք ամենքս եղբայրներ ենք և կեանքի համար մեր օրէնքն է՝ բոլորը մէկի և մէկը բոլորի համար»:

Ահա որպիսի արդարացի կեանք են ստեղծել զւիցերացիք իրենց համար իրենց անմատչելի յափառեական լեռների հովանու տակ: Զւիցերիայի բնութիւնն իր ժողովրդի համար կրթել է անկախ, տոկուն բնաւորութիւն, ուստի նախ քան այն, թէ զւիցերացիք ինչպէս են ազատութիւն ձեռք բերել, անհրաժեշտ է իմանալ թէ ինչպիսի երկիր է նրանց երկիրը:

Զւիցերիան գտնուում է մեզնից դէպի արևմուտք. նա բռնում է ընդամենը 700 քառակուսի մղոն միջին եւրոպական հողերից, ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Աւստրիայի մէջ: Վաղուց ի վեր այնտեղով էր անցնում առևտրական ճամբան հիւսիսից հարաւ, որ գերմանական Ստրասբուրգ, Կեոլն, Միլհառուգէն հարուստ քաղաքներից տանում էր իտալիայի վաճառաշահ քաղաքները. ամբողջ Զւիցերիան թէև ծածկւած է եւրոպայի ամենաբարձր սարերի—Ալպերի լեռնաշղթաներով, բայց և այնպէս այդ լեռնաշղթաներն այնպէս են տարածւած, որ նրանց արանքներով շատ յարմարաւոր անցքեր կան, որտեղից և անցնում էին նախնական ճամբաները: Ամենահոչակաւորը Ս.-Գօթարի անցքն է, Զւիցերիայի և իտալիայի մէջ, որ հիւսիսային և հարաւային ազգերի հաղորդակցութեանն է ծառայել միշտ: 1882 թիւն Ս. Գօթարեան լեռան լայնքով մի բաւական լինգարձակ տունել (անցք, որի պատերը կամարով են զարդարաւած.) շինեցին 15 վերստ երկարութեամբ և երկաթուղի անցկացրին նրա միջով:

Ալպերը իրենց բոլոր սարահարթներով բըռնում են մօտաւորապէս 300 քառ. վ. արածութիւն: Ոչ այնքան բարձր ստորոտներով (800 ոտ.

Երկարութեամբ և 2000 բարձրութեամբ) սկսւում են նրանք հիւսիսից և արևելքից, ծածկւած ըստ քանչելի սաղարթաշատ ու փշատերև անտառներով։ Ալպեան ալիքաւոր շղթաների միջին բարձրութիւնը 2000 մետր է, սակայն առանձին գագաթներն աւելի վեր են բարձրանում։ Նրանցից ամենաբարձր գագաթը Մօմբանն է 3765 և իւնգրֆրառուն 4167 մետր բարձրութեամբ։ Ալպերը բաժանում են 38 շղթաների։ Բռնելով ամբողջ Զվիցերիան, ձգւում են նրանք և նրա սահմաններից դուրս շատ հետու։ — Նրանց արևմտեան շղթաները մտնում են Ֆրանսիա և համառում Միջերկրական ծովին։ Հարաւում՝ հիւսիսային Իտալիայի մէջ նրանք միանում են Ալպենինեան լեռների հետ։ արևելքում Ալպերը կազմում են ամբողջ լեռնային երկիր—Տիրոլը, և Դինարեան Ալպեր կոչւելով, ձգւում են Աղբյական ծովի արևելեան ափերով։ Սակայն նրանց ամենաբարձր կատարն ու ամենապեղեցիկ բարձրունքները գրանցում են բացառապէս Զվիցերիայում, այդաեզով անցնում են միջին Ալպերի երեք շղթաները։ Նրանց գագաթները ծածկւած են մշտական ձիւնով, որովհետև այդպիսի բարձրութեան վրա օդն այնքան ցուրտ է, որ անդամ ամարային արևն անգօր է հալեցնել նրան և նա դարերով կիտուում է այնտեղ։ Լեռների ձիւնը միշտ սառչում է իբր սառուց և նրանով լցնում ապառաժուտ անդունդները։ այդ յաւիտենական սառցակոյտերը կապ-

տաւուն երանգով՝ անչափ գեղեցիկ են։ Յաճախ տակից քիչ հալ ընկած սառցակոյտը սկսում է մեղմ սղղալ լերան թեքւածքով։ Բայց և դէպքեր են լինում, երբ ձեան ու սառցի վիթխարի զանգւածներ—ձիւնակոյտեր, թեր զառիվայրով սարսափելի արագութեամբ ցած են գլորւում, իրենց հետ տանելով ծառեր և քարի կտորներ։ Այդ ձիւնակոյտերն ամեն բան ոչնչացնում են իրենց ճամբին և վայ այն փոքրիկ գիւղին, որի վրա կընկնի այդպիսի ձիւնակոյտը։ իրենից յետոյ նա թողնում է սկ շերտ, որև է բուսականութիւնից զուրկ։ Բայցի ձիւնակոյտերից լեռնցիների համար մեծ վտանգ են ներկայացնում և լեռնային փլատակները։ Նրանք այսպէս են առաջանում։ Չուրը ժայռերի ճեղքւածքները թափանցելով և այնտեղ սառչելով, խորտակում է ամենակարծր լեռնային զանգւածներն անգամ։ Նրանցից պոկւում են ահագին կտորներ և դղրդոցով գլորւում դէպի հովիտները։ Ահաբեկւած աղգաբնակութիւնը փախչում է դէս ու դէն։ և մի քանի վայրկեանի մէջ ոչնչանում է մարդկանց երկար տարիների աշխատանքը։ Այդպէս անցեալ դարու սկզբին կործանւեց Գօդառու փոքրիկ շենը։ Մի քանի անձրեային տարիներ նրան շրջապատող լեռնաշլանջերին ողողել էին ճեղքւածքները։ Ակում են թափւել ժայռի մանր կտորտանք, սակայն ոչ հովիտները, ոչ էլ անտառում աշխատող փայտ կտրողները ոչինչ ուշք չեն դարձնում այդ սովու-

բական երեսյթի վրա։ Յանկարծ մի չարագուշակ ճայթիւն է լսուում. լեռան կրծքին ահազին վիհ է կազմուում. հարեան անտառում ծառերը տարուքերուում են, որպէս հասկերը քամու առաջ. թոշունները սոսկման ճիշերով փախչուում են մօտագայ լեռան ուղղութեամբ այն անտառից, որին ցնցել էր ինչ-որ աներեսյթ ձեռք։ Ապա լեռան ահազին կտրւածքը ծառերի, թփերի ու քարերի հետ միասին ընկնուում է հովիտը։ Մի երկու ըռպէի մէջ 100-ից աւելի տներ, սրաններ, բագեր անտառնների հետ—բոլորը ոչնչանուում է և մօտ 447 մարդ ծածկուում փլատակերի տակ։ Մի ժամ առաջ այգիների մէջ նստած չքնաղ և երջանիկ աւանը՝ այժմ քարերի ու աւերակների մի կոյտ էր ներկայացնուում։

Անսովոր մարդու համար սարսափելի ու վըտանգաւոր է յաւիտենական ձեան աշխարհ. առանց ուղեցոյցի անկարելի է մինչև իսկ համարձակւել լեռնային գագաթները բարձրանալ. մի փոքրիկ անզգուշութիւն—և ճամբորդը կարող է ընկնել ճեղքերի մէջ, սկսել մերկ քարի վրա և անդունդը զլորւել։ Քչերը միայն կարողացել են մինչև գագաթները համենել՝ ցուրտ օդն այնքան նոսր է այնտեղ հովիտներուում մեր շնչած օդից, որ ճամբորդների ականջներից ու քթից սկսում է արիւնը հոսել, ուշաթափութիւն պատահել։

Ամառւայ կէսերին էլ այնտեղ այնպիսի ցըրտեր են լինուում, ինչպէս ամենակատաղի ձմեռ,

մառախլապատ օրերին, երբ կարելի է ձիւնախառն բուք նախատեսել՝ ամենափորձառու լեռնային ուղեցոյցը ճամբորդին չի տանի լեռները. բուքի ժամանակ ոչ միայն լեռնցի որսորդների կածաններից կարելի է հեշտութեամբ մոլորել, այլ և կարելի է սառչել ձիւնի ու սառուցի այդ ամայութեան մէջ։ Մոլորւած ճամբորդներին ազատելու համար ամենաբանուկ լեռներուում, օր Ս. Գօթարի և Ս. Բերնարի՝ վարդապետները հընուց մենաստաններ են շինել, ուր գիշերելու տեղ և սնունդ են տալիս անցորդներին. յաճախ և սառած մարդկանց առողջացնուում։

Ի՞նչն է ախր զբաւում դէպի այդ անմերձենալի լեռները, երբ նրանց վերելքն այդպէս վըտանգաւոր է։ Լեռների կախարդական գեղեցկութիւնն է, որ զբաւում է մարդկանց, հէնց այդ անմերձենալիութիւնն ու անյայտութիւնն է, որ քաշում է. զիտենալու, իմանալու ծարաւն է, որ մարդկանց դէպի լեռնակատարներն է մղում։ Ուսումնագէտները բարձրացել են, որ նրանց կազմն ուսումնասիրեն, տեսնեն արգեօք բոյսեր ու կենդանիներ կան նրանց վրա, կլիման ի՞նչ տեսակ է. բոյսերն ու կենդանիները լեռների վրա ներքեից վերև ի՞նչպէս են գասաւորւած։ Հէնց այդ հետախուզութիւններն էլ ցոյց տւին, որ լեռնաւանջեցում ամեն բան այն կարգով է գնում, ինչպէս հարթավայրերուում հարաւից հիւսիս։ Քանի դէպի հիւսիս, այնքան ցուրտ ու քիչ կենդանու-

թիւն. այնպէս էլ սարի վրա—որքան վերև, այնքան ցուրտ ու ամայի: Ուսումնական ճամբորդներն իմացան, որ 2,500 մետր բարձրութեան վրա, երբէք Յելսիուսի 4⁰ աւելի տաքութիւն չի լինում և այնտեղ մշտական ծիւն է նստած, որ երբէք չի հալւում, իսկ այդ ծիւնէ աշխարհին ամենամօս վայրերը բոլորովին նման են բնեռային երկրներին—թէ այնտեղ, թէ այստեղ լերկ ապառաժերն են միայն, որ ծածկւած են մանուռով ու քարաքոսով: Զւիցերիայում եթէ մարդ ամառայ կիսին բարձրանայ հովակց դէպի Մօմբանի կամ Ինգֆրասուի գագաթը՝ ներքեւում նա կարող է հիանալ հարաւի ծաղիկներով ու պտուղներով—վարդ, խաղողի վազ, նշի ու թզի ծառեր. քիչ էլ վեր խաղողը նորէն ծփում է տների պտտերին, դաշտերում ցորենը փայլում է ուկու գոյնով, գարունը փոխարինում են ծաղկած կապտագոյն առույն ու ասպասար. այնուհետեւ ըսկում են ձեզ շրջապատել կաղնի և հաճարի անտառները: Ձմեռն այստեղ 4 ամսից չի անցնում: Սակայն քիչ աւելի բարձրում գաշտերը հագւազիւտ են դառնում, բոլոր թերւածքները անտառով պատաւած են և նրանց տերևաշատ ծառերի մէջ հետզհետէ փշի տեսակներն են աչքի ընկնում, ու քիչ-քիչ դուք մտնում էք փշատերներիապաղաղ անտառները, ուր թագաւորում են հիւսիսի մուգ գեղեցկուհիները՝ փարթամ եղենիները երկար ուռույներով և վայելչակաղմ սոճինե-

րը. իրենց արծաթեայ ասեղներով, փիճիները, որ ամեն աշնան փշերով են լցւում:

Բայց ահա վերջանում է անտառային մասը, երևան են գալիս լերկ ժայռեր, ծառերը նրանց տեղի են տալիս և այս անգամ պատահում են մանր խմբակներով միայն, քանի շատ դէպի վեր, այնքան աւելի սակաւ: Որպէս սև փլւածքներ, ձգուում են խրամատների հետքերը. քարն սկսում է գերիշխել և տեղ է տալիս միայն խոտերին ու մանր թզուկ սոճիներին: Ալպերի մարգերի փարթամ շըջանն է այս. նրան մնուցանում են անթիւ աղբիւրներն ու ստորերկեայ առակները, որ կազմում են սառցակոյտերի տակի հալոցից. — բոյրով խոտերն ու երփներանգ ծաղիկները փայլում են արևի վառ լուսով, որ լեռներում այնպէս ուժգին արտացոլուում է լերկ քարերի ու պեծակ ձերմակ ձեան վրա:

Այդ բարձրագիր մարգագետինները յաճախ այնպիսի զառիվայրերում են տարածւում, որ ոչ կովը, ոչ ընտանի այծը կարող են մանել նրանց մէջ: Այստեղ ազատ արածում են վայրի գեղեցիկ այծեամներն ու պախրաները՝ դէպի ետ դարձած եղջիւրներով և խոշոր ու խելացի աչքերով: Փոքը խմբերով նրանք շըջում են սարահարթ մարգագետիններով, թեթև թոփչքներով ապառաժի այս ու այն կողմն անցներով, մաղցն ով ամենառողականայեաց ժայռերի վրա: Ամբողջովին կապոյտ հագած, շըջապատող Ալպեան լեռների

հետ մի գոյնի՛ հրացանը ձեռքին պատրաստ, զողունի հետամտում է նրանց որսկանը, քամուց ազատ կողմից *). մերթ սողալով, մերթ խոշոր քարերի ետևը թագնելով, նա դիտում է երբեմն իր զլխի վերեկից անցուղարձող այծեամներին և անվրէպ հարւածով նշան դրած զոհը տեղն է կպցնում: Աւելի բարձրում մկաւում է յաւիտենական ձիւն ու անմատչելի սաոցակոյտերի թագաւորութիւնը: Այստեղ են սկիզբն առնում եւրոպայի ամենամեծ գետերը. Հոենոսը հիւսիսային լեռնաթիկունքներից ցած է վազում: Ռոնը խիզախում է դէպի հարաւ. Փօ գետը՝ հարաւարեւելը և Դունայը հոսում է հեռու արեելը, Սև ծովը է տանում նա իր սառն ալիքները, որ Ալպեան բարձունքների ձիւնից ու սաոցից են ծընունդ առել: Անմատչելի ժայռերից, իբր սքանչելի ջրվէճներ, թաւալգլոր հոսում են այդ գետերը, յաճախ կորչում մուլթ անդունդներում, տեղ-տեղ էլ վիթխարի լճերի ձևով տարածում: Հոենոսը կազմում է Շտաուբախ հոյակապ ջրվէժը և, կոնստանցեան լճով անցնելով՝ մեծ, նաւազնաց ու աշխոյժ գետի է վոխւում: Դա առևարական ճամբան է, որ լեռներում մեկուսացած Զւիցերիան միացնում է Գերմանական ծովի հետ: Ռոնը հոսում է Զւիցերական մեծագոյն

*) Որպէսզի սա գաղանների հոտառութեանը չըհասցնէ մարդկային շունչը:

լճով և պատռելով իւրա լեռնագօտու (Զւիցերիայի և Ֆրանսիայի մէջ) մի առանձին շղթայի խոռոչներն ու հովիտները՝ կատաղած գագանի նմանուղիղ անցնում է Միջերկրական ծովը:

Միջին Զւիցերիայում մի քանի լճեր հաղորդակցութիւն ունեն իրար հետ և տարածում են ամենաբարձր լեռների մէջ—Լիւցերնի, Տունի և Չորս Կանտօնների լիճը, սակայն իր չքնաղավերով հոչակւած է մանաւանդ Լեմանը կամ Ժընեվի լիճը:

Այդպէս է Զւիցերիան — գեղեցիկ, հզօր և անմատչելի:

Այստեղ մնել է մի ժողովուրդ՝ սովոր վըտանգի, վստահ իր ուժերին և յամառութեամբ իր նպատակին հասած: Բոլոր զւիցերացիք երեք միլիոն են ընդամենը. Նրանք խօսում են երեք տարբեր լեզուներով.—Զւիցերիայի արեելեան և հիւսիսային մասում գերմաններէն, հարաւային մասում իտալերէն և արևմուտքում ու երկրի միջին մասում ֆրանսներէն: Սակայն այդ արգելք չի եղել, որ նրանք մի կուռ դաշնակցութիւն կազմեն, որի մէջ բոլոր երեք ազգութիւններն էլ հաւասար իրաւունքի տէր են, ինչպէս և ամենքը հաւասար՝ օրէնքի առաջ: Զւիցերացիք իրենք այսպէս են ասում իրենց հայրենիքի մասին.

«Այն հողը, որի վրա մենք կառուցանում ենք մեր տները և որը մշակում ենք՝ անբերը մի երկիր է. ծովը ամեն կողմից նրան չի ու-

ոռգում. Նա զարդարւած չէ խաղողի անընդմիջող վաղերով, մենք արգաւանդ դաշտեր և մարզագետիններ չունենք, —ոչ, մենք ստիպւած ենք լեռների ու ամպրոպների մէջ ապրել: Մեր դաշտավայրերը — մեր լճերի ջրերն են բռնել. մեր լեռնային թեքւածքները — սառուցն է տիրապետել: Հարաւային երկրների դաշտերը միջօրէի պայծառ արևի ճառագայթներն են ջերմացնում, մեր բարձունքներում յարատե մրրիկներն ու փոթորիկներն են աղմկում: Մենք լեռնային կիրճերի անխոնջ պահապաններն ենք. մենք պարտաւոր ենք միշտ ուժով փորել ամենը մեր բնութեան սառը ծոցից: Մենք պառկում ենք քնելու, իմանալով թէ որպիսի վտանգ է սպառնում մեզ: Մենք աշխատել գիտենք, և այն բոլորի համար, ինչ մենք ունենք՝ միմիայն մեզ ենք պարտական»:

Այդպէս են Զւիցերիայի բնակիչները: Տեսնենք ինչպէս են ձեռք բերել պետական այդ հիմնալի կազմը, որ թագաւորում է նրանց երկրում:

III

XIII դարում արդէն գերմանական կայսրները գիտէին, որ Ս.-Գոթարի կիրճով, այն ժամանակի համացողութիւններով, ամենալաւ ճամբան է անցնում իտալիա. ուստի և այդ անցքի շուրջը գտնւող զւիցերական երեք անտառուտ շղանների հողերը — Ուրին, Շվիցն ու Ունտէր-

վալդէնը ստացան մի առանձին հետաքրքրութիւն: Այն ժամանակ ամբողջ Զւիցերիան բաժանված էր բազմաթիւ առանձին մասերի, մի քանիսը խոշոր, միւսներն աւելի մանը, մի քանիսը ձըգւում էին որպէս բաղաքներ և կառավարում հարուստ վաճառականներսվ, միւսները բնակեցրած էին երկրագործներով և կառավարում էին համայնական ժողովներով: Հնուց ի վեր Զւիցերիան բաղաքներ շատ է ունեցել: Կենդանի առետուր ունեցել են մանաւանդ Թրէյբուրդ, Ցիւրիս, Բէրն, Տուն և ուրիշ բաղաքները: Քաղաքացի դասը միշտ օգտաել է լայն աղատութեամբ. զւիցերական գիւղերում իսկ ճորտութիւնը երբէք այնպէս չի հարւածել ժողովրդին, ինչպէս Եւրոպայի ուրիշ երկրում: Գերմանական կալւածաւէրերի համար չարչարող ճորտերի կողքին, Զւիցերիայում զիւղացի շատ ազատ՝ որսորդներ, հովիւներ, ձկնորսներ, անասնատէրեր ու երկրագործներ կային: Իրեն գիրքի՝ անմատչելի լեռների շնորհիւ, Զւիցերիան չի տառապել կոիւներից, որոնք այնքան կործանիչ են ուրիշ երկրների համար և նրա բնակչութիւնը օգտաել է նախանձելի բարօրութեամբ:

Հնագոյն օրէնսդրութիւնն ու ժողովրդական կառավարութիւնը զոյութիւն ունեցել է վաղուց ի վեր — Ուրի, Շվից և Ունտէրվալդէն ազատ կանտօններում: Ճիշտ է, այդ ժողովրդական կառավարութիւնը որպէս թէ դեռ էլի գերմանա-

կան կայսրին էր ենթարկւած, սակայն վերջինս համարեա չէր խառնւում այդ լեռնաստանի գիւղերի համայնական գործերին: Համայնական ժողովներն էին այստեղ վճռում տեղական բոլոր ամենակենսական հարցերը: Համայնական ժողովները տեղի էին ունենում տարւայ մի որոշ ժամանակ, բաց երկնքի տակ: Բնակիչների յայտնի թւի պահանջով ժողովը կարող էր լինել և արտակարգ, կայանալ սահմանւած ժամանակից դուրս: Բոլոր խմբումները միանում էին իբր կանտօնական խորհուրդներ, սակայն այդ խորհուրդներն անձեռնաս էին գտնուում կարեոր գործերը վճռելու, անի որ այդտեղ, որպէս և համայնական ժողովների ժամանակ, ամբողջ ժողովուրդը չէր մասնակցում, այլ նրա ներկայացուցիչները միայն: Պարզ է, որ բոլոր համայնական ժողովներն էլ միատեսակ անկախութիւն չէին փայելում. մի քանիսը պարտաւոր էին իրենց վճիռները ներկայացնել այն տիրապետող անձնաւորութիւններին ի հաւանութիւն, որոնք համայնքում ընդարձակ հողերի տէր էին: Միւսներից աւելի անկախ էին Շվից կանտօնի համայնական ժողովները: 1294 թւին Շվիցի համայնական ժողովը սահմանեց, որ ոչ ոք չհամարձակի իր հողը կամ տունը ծախել վանքերին կամ օտարերկրացիներին. հակառակ դէպքում սպառնում էին տուգանքի ենթարկել. իսկ իրենց կանտօնի հողերի վրա գտնող վանքերին հետեւ

ւեալ պահանջները դրին. «Եթէ մեր համայնական հողի վանքերը չեն ցանկանայ իրենց կալւածներին համապատասխան հարկեր ու տուրքեր վճարել, ի թեթևութիւն բնակիչների, — մեր համայնական գաշտերով, մարզագետիններով, արօտներով չեն օգտակի: Օտարերկրացիներից էլ ով մեր համայնքում իր ժամանակաւոր տիրապետութեան տակ կառնէ կամ կապալով կվերցնէ որևէ անշարժ կալւածք՝ պարտաւոր է այդ կալւածքից վճարել, իբրև համար ոչ այնքան ծանր, հարկ: Իսկ եթէ հողատէրը կարգելէ իր վասալին (կամ կապալառուին) վճարել ու այդ ուղարձառով մինչև անգամ նրա ձեռքից հողը կառնէ և ուրիշի կրտայ, — ոչ ոք չի համարձակւի այդ հողը վերցնել, տուգանքի երկիւղից: Իսկ նա, ով չի ցանկանայ տուգանք վճարել, ոչ ոք իր բագը չի թողնի նըրան, չի տայ ուտելու կամ խմելու մի բան. և ով այդ կանէ, նա յանցաւորի փոխարէն կվճարի տուգանքը»:

Համայնական ժողովներն այդպէս խիստ ու որոշակի էին նշանակում իրենց համայնքում ամենքի համար հաւասար և պարտադիր հարկերն ու տուրքերը: Այդ ժողովներն էլ կառավարում էին և համայնական խոշոր հողային կալւածները, գլխաւորապէս արօտատեղերն ու անտառները: Դատավարութիւնը և օրէնսդրական իշխանութիւնը նոյնպէս նրանց ձեռքին էր գտնուում: Համայնքի բոլոր արձակ անդամները մասնակցում էին



ժողովսերին, ոչինչ տէր չընդունելով իրենց գըլիին. մի խօսքով բոլոր նրանք, որոնք ոչ թէ ուրիշի, այլ իրենց սեփական հողաբաժնի վրա էին ապրում:

Ժողովրդական դատարան ու ժողովրդական խմբումներ հեռաւոր, հին անցեալներում ունեցել են շատ ազգեր. գերմանացիք էլ մի ժամանակ ունէին իշենց ժողովրդական համագումարները. ոռուսները դեռ ՀՊ դարում (իսկ նօվգորօդում ՀՎ-ից աւելի ուշ) իրենց գործերը վճռում էին ժողովրդական վէջէններում: Սակայն, հետզհետէ ամենուրեք կարեորութիւն ստացան հարուստ մարդիկ. վարչական ոյժը մի տեղ իշխանները յափշտակեցին, մի ուրիշ տեղ թագաւորները, (աւեղ-տեղ էլ զինուրական հրամանատարները, ինչպէս օր. դուքսերն ու կայսրները Գերմանիայում). և ամեն տեղ ժողովրդական ազատութիւնը դարձդար շարունակ աւելի ու աւելի ճնշւեց: Միմիայն նա պահպանւեց հէնց լեռնոտ Զւիցերիայում, ուր պարզ որսորդներն ու հովիւները նրան պահում էին իրենց ձեռքերին: Գերմանական տիրանների մի փոքրիկ ճնշումը բաւական էր, որ նրանք վճռաբար զէնք առնէին իրենց իրաւունքն ու անկախութիւնը պաշտպանելու: Քիչ-քիչ ժողովներն աւելի բազմամարդ էին դառնում, նրանց մասնակցելու իրաւունքն աւելի մեծ թւով մարդկանց վրա էր տարածւում. ազնւականութիւնն ու հոգեորականութիւնը ստիպ-

ւած էին ժողովրդի զօրացած բարձրագոյն իշխանութեանը ենթարկւել. նրանք պարտաւոր էին գիւղական որևէ է կախածքին տիրանալու միտումից հրաժարւել. մինչդեռ մնացեալ ամբողջ Եւրոպայում այդ երկու ուժեղ դասակարգը ոչինչ դատ կամ օրէնք չէին ճանաչում իրենց վրա:

Զւիցերացիք ստիպւած էին ամենից աւելի յամառ կոիւ մղել հզօր Հաբսբուրգների դէմ, ամբողջ Աւստրիան իրենց ձեռքը կենտրօնացրած այդ տիրանների դէմ: Այդ տան կայսրները տիրապետում էին հարաւային-գերմանական բոլոր հողերին. Տիրօն ու Զւիցերիան նոյնպէս նրանց ժառանգական սեփականութիւնն էր համարւում: Նրանք Զւիցերիա էին ուղարկում իրենց կառավարիչներին, այսպէս՝ կոչւած ֆօգտերին. այդ ֆօգտերը յաճախ բիրու էին լինում և չէին ցանկանում ժողովրդի այլ և այլ իրաւունքները ճանաչել. այն իրաւունքները, որ համայնական ժողովները նշանակում էին: Այդ ֆօգտերի դէմ կուելու համար Ուրի, Շվից և Ունաւէրվալդէն երեք կանտօններն իրար մէջ գաշն կապեցին. նրանք երդեցին իրար օգնել գործով, խորհրդով, անձամբ, ունեցւածքով, թէ իրենց հողերի վրա և թէ նրանցից դուրս, և կուել այն ամեն մէկի կամ այն բոլորի դէմ, ով իրենց բոլորին կամ մէկն ու մէկին որևէ է վիրաւորանք կհասցնի կամ բռնութիւն կգործադրի իրենց վրա: Նրանք երդեցին ոչինչ դատաւոր չճանաչել, եթէ այդ դատաւորը

ժողովրդի ընտրութեամբ չի ստանայ իր պաշտօնը և որ իրենց հայրենակիցը չի լինի կամ փողի համար կվարէ դատը։ Ամեն մարդ պարտաւոր է միայն ժողովրդի ընտրած դատաւորներին հազարներել։ Առաջին երեք անտառային կանտօնների այդ դաշնակցական պայմանը, 1292 թւին, Զւիցերիայի անկախութեան սկիզբը դրեց։ Ժողովրդական բանաստեղծութիւնն այդ նշանաւոր դէպքը զարդարել է զեղեցիկ պատմւածքներով. ազատիչ-հերոս անւանեցին հմուտ աղեղնագործ Վիլհէլմ Տէլլին։ Պատմութիւնը չի հաստատում ժողովրդական այդ աւանդութիւնները, սակայն դրանք այնքան գեղեցիկ են, որ շատ բանաստեղծներ նրանց բանաստեղծական հոյակապ պօէմների ու դրամաների են վերածել։

Ահա այդ պատմւածքը.

Աշնանային մի խուլ գիշեր Ռւրի, Շվից և Ռնտէրվալդէն կանտօններից 33 հովիւ ու որսկան վայրի այծեամների ետելից իջան Գրիտլի դաշտը, Զորս Կանտօնների լճի ափը։ Լեռներն ամուր սղմել էին խորունկ հովիտները. աշնանային քամին վսում էր խոռոչներում, և լիճը զայրոյթով բաղիւտում էր ժայռոտ ափերին։ Բաւին երկընքով քշում էր սկագնաց ամպերին, ու նրանց տակից հազիւ հազ միայն դուրս էր նայում դալ-

*) Հոչակւած է մանաւանդ գերմանացի յայտնիքանաստեղծ Շիլէրի գրած «Վիլհէլմ Տէլլը»։

կահար լուսինը։ Հասարակ նետ-աղեղով զինւած այդ մարդիկ եկել էին այգաեղ երդւելու Բարձրեալ Աստծու անունով, որ ամենքն այսուհետեւ պէտք է անյողողող կանգնեն իրար համար, հայրենիքի և ժողովրդի իրաւունքների համար։ Որուչ մի բռնաւորի թոյլ չեն տայ իրենց երկրում մնալու և համայնքները զինելով ապստամբութեան կպատրաստեն կայսերական նահանգների ու նրանց զօրքերի դէմ։ Պէտք է միայն յարմար դէպքի ու դրդիչ առիթի սպասել։

Առիթը ներկայացաւ շուտով։

Մի զեղեցիկ օր Ռւրիի բնակիչներն իրենց քաղաքի հրապարակի վրա մի բարձր սիւն տեսան կանգնեցրած և ազնւականի փետրազարդ գլխարկ նրա ծայրն անցկացրած։ Այդպէս հրամայել էր Գեուլէր Փօգտը և կարգադրել, որ բոլոր մօտից անցնողները գլուխ տային ու նրա առաջ գլխարկները վեցցնէին, որպէս եթէ ինքը Փօգտար լինէր նրանց առաջ։ Ռւրիի բնակիչները իրմբւեցին հրապարակը և սկզբում չէին հասկանում, թէ ինչ է նշանակում այդ, ատելի օտարականի կողմից։ Ոչ ոք սատրանալ չուզեց, և ամենքն էլ նախատական սիւնից հեռու անցան։ Բայց ահա հրապարակի վրա երեաց հարևան գիւղացի յայտնի աղեղնաձիգ Վիլհէլմ Տէլլը։ Նետ-աղեղն ուսին նա գնում էր իր փոքրիկ որդու հետ և միանգամայն անտարբեր անցաւ սեան մօտից գլխարկը գլխին։ Հէնց այդ բոպէին պահապանը բռնեց

ու ձերքակալեց նրան, Այդպիսի բռնութիւնից գրգռւած ամբոխը շրջապատեց Տէլին և սկսաւ նրա ազատութիւնը պահանջել: Քաղաքացիների և պահապահների մէջ արդէն ընդհարում էր սկըսում, երբ փողոցի ծայրից յանկարծ երևաց ինքը փօգտը: Նա սրնթաց արշաւեց դէպի պահապահը—և, տեղեկանալով, թէ բանն ինչումն է, սաստիկ բարկացաւ Տէլի անհնազանդութեան և ամբոխի կոստութեան վրա:

—Գլխատել նրան, իսկոյն գլխատել. — գոռաց նա:

Այդ խօսքերի վրա վիճէլմ Տէլի փոքրիկ որդին սկսեց բարձրաձայն լաց լինել և թոյլ ձեռքերով փաթաթւեց հօրը: Ամբոխը սոսկման ձիչ արձակեց. նրա միջից մի քահանայ առաջացաւ դէպի փօգտը և թախանձեց, որ իր հոգուն այդպիսի մեղք չբարձէ, անմեղ մարդու արիւնը թափելով: Բոլոր ամբոխը պաղատում էր, որ նշանաւոր աղեղնաձիգի կեանքը խնայւի: Այն ժամանակ Գեալէրն այնպէս ձևացրեց իբր զիջում է աղերսանքներին. սակայն իր զոհի համար մի նոր ծաղր մտածեց:

—Եթէ Վիլհէլմն այդպէս հիանալի արձակող է, ասաց նա, ևս կիմնայեմ նրա կեանքը, միայն թող նա ցոյց տայ մեղ իր արւեստը, և ահա այս ինձորը վայր գցի իր որդու զլիից 120 քայլի վրա:

Տէլի տանական կուրծքը սղմւեց, և նա հրաժամարւեց իր կեանքը գնել այդպիսի գնով: Սաւ-

կայն նրա որդին սկսեց աղաչելով համոզել հօրը, որ ինքը բոլորովին չի վախենում, քաջ գիտենաւ-նալով, որ հօր նեար չի վրիպի: Հայրենակիցնե-րից շատերը նոյնպէս սկսան համոզել Տէլին, որ չհրաժարւի փօգտի առաջարկութիւնից:

Տէլը վերջապէս զիջեց նրանց ինսդրքին: Նա կապարձից հանեց երկու նետ, մէկն աղեղի վրա ամբացըրեց, իսկ միւսը թագցըրեց կրծքի տակ: Գեալէրի զինակիրները մանկանը կանգնեցրին նըշանակած տարածութեան վրա, մի ծառի տակ: Բայց Տէլը, գունատ ու յուգւած, չէր կարողանում իրեն յաղթահարել սիրեցեալ զաւակի վրա նետ արձակելու. Նա մինչեւ անգամ այնքան ստորացաւ, որ խոնարհեց իր հպարտ զուլսը և խնդրում էր փօգտին, որ աւելի լաւ է իրեն գլխատեն իսկոյն: Գեալէրին շատ էր հետաքրքրում իր յօրինած ծաղը: Նա անողոք էր. և Տէլը ժողովեց բոլոր իր քաջութիւնը: Նա սրբեց աչքերը, ուշիմ նշան տւաւ և արձակեց նետը. սա սարսափից քար կտրած ամբոխի գերեզմանային լուռութեան մէջ վզզաց չ'ըրագուշակ, և Տէլը շհամարձակւեց առաջ նայել ու գետին ընկաւ: Երեխայի ուրախական աղաղակը նրան ուշի բերեց:

Կենդանի է. կենդանի է. իր որդին կենդանի է. նա ջերմ ձեռներով արդէն գրկում է սարսափից սառած հօրը և ցոյց է տալիս խնձորը. մէջը ցցւած նետով: Խենթ ուրախութիւն պատեց

ամբոխին։ Այդ բանը գրգռեց Գեսլէրին և, Տէլին իր մօտ կանչելով, նա չարութեամբ հարցրեց. «Ինչու դու երկու նետ հանեցիր, երբ ընդամենը մի անդամ էր զեզ հրամայւած արձակել»։

—Երկրորդ նետու, հպարտ պատասխանեց Տէլլը, քեզ համար էր նշանակւած այն դէպրում, եթէ պատահամբ ես սպանէի որդուս։

«Կապեցէք աւազակին, գոռաց Գեսլէրն իրեն շրջապատող պահակախմբին, և թող նա իր օրերը բանտում վերջացնէ»։

Բանտը գտնուում էր լճի միւս ափին։ Կապած Տէլլին ձգեցին նաւակը. այնաեղ նստեց և Գեսլէրն իր զինակիրներով։ Սակայն հէնց լճի կէսն էին հասել, երբ սարսափելի փոթորիկ բարձրացաւ. ալիքները տաշեղի նման նաւակը նետում էին այս ու այն կողմ. զիշերն իր խաւարի մէջ թագցրեց եղերային բոլոր զծերը։ Ավի ապառաժների ու ստորջրեայ քերծերի մէջ սարսափահար պահակախմումբը չէր կարողանում իրեն յենարան գտնել։ Գեսլէրն ստիպւած էր Տէլլի օգնութեանը զիմել. նա զիտէր, որ Տէլլը հմուտ զեկավար է և ափերի ամենաաննշան խորդ ու բորչ գութիւններին տեղեակ։ Նա հրամայեց, որ բաց թողնեն Տէլլին և նաւակը կառավարելը նրան յանձնեն։ Տէլլը շակեց իր թմրած անդամները, գաղտուկ ձգեց ուսովը նաւակի յատակին ընկած նետազեղը և զեկը ձեռքն առաւ։ Նրա սովոր, սուր աչքերը որոշում էին բոլոր ժայռերը, եւ

զերային բոլոր անձաւները։ Փոթորիկ մռնչիւնների մէջ բարձր հնչում էր նրա հրամանը թիավարներին, և նաւակը, կոհակից կոհակ թոչելով, տարւում էր ուղիղ դէպի ափ։ Սակայն հէնց որ նրա կայմը եղերքի քարաժայուերին առաւ, նա ուժգին հարւածով նաւակը ետև հրեց ու ինքը ճարպիկ շարժումով ճողոպրեց ափը և թագնւեց ապառաժների այրերում։ Երկար նա հետեւում էր ափով, թէ իր ատելի թշնամու նաւակն ինչպէս ալիքներն անխնայ այս ու այն կողմն են նետում։ Ու, այնուամենայնիւ, Գեսլէրն իր մարդկանց հետ աջողեց ափ դուրս գալ և հէնց ոտքը ցամաքին էր դրել, Տէլլի նետը ժողովրդի հարստահարող բռնակալին կաթեցրեց տեղն ու տեղը։ Այս բոլոր իրողութիւնը մէկէն ոտքի հանեց Շվից, Ուրի, Ունտէլվալդէն—երեք կանտօնների ազգաբնակութիւնը.՝ ատելի Հաբսբուրգների փոխակառավարիչների ամբոցը կործանեցին. իրենց ֆոգտերին գիւղացիքւցերական սահմաններից դուրս քշեցին և ազատ անկախ հասարակապեառութիւնն ամրացաւ Զւիցերական Դաշնակցութեան կանտօններում։

Այս գողորիկ զբոյցը, թէև պատմական էշերում վաւերականութիւն չի գտնում, բայց և այնպէս մինչեւ այսօր էլ զւիցերացիք սիրով պատմում են ճանապարհորդներին Զորս կանտօնների գեղարւեստական լճի մօտերը։ Վիլհէլմ Տէլլ այգելը էլ ամբողջ Զւիցերիայի ժողովրդական սիրում էլ ամբողջ Զւիցերիայի ժողովրդական սի-

ըելի հերոս է. շատ քաղաքներում ժողովրդի հաշւով գեղեցիկ արձաններ կան կանգնեցրած նրա պատւին. նրանց վրա Տէլլը միշտ ներկայացրած է հասարակ լեռնցի հովի կերպարանքում, նետաղեղը ձեռքին, նեար միշտ պատրաստ՝ ժողովրդական ամեն բռնաւորի մահանարւած հասցնելու:

IV

Զւիցերական աւելի ընդարձակ կանոններում ժողովրդական խնդնավարութիւնը մասամբ այլ կերպ կազմւեց: Այն շրջաններում, ուր առերական մեծ քաղաքներ կային, ինչպէս օրինակ Բերնեան, Յիւրիխեան և այլն, գործերը կառավարում էր ընտրած մարդկանցից կազմւած մշտական խորհուրդը. աւելի կարեոր խնդիրներ վճռելիս այդ խորհուրդը պարտաւոր էր միշտ ժողովրդին իրեն դիմել: Այդ պատճառով բաց երկրնքի տակ բազմաթիւ ժողովներ էին կայանում, ուր մասնակցել կարող էր կանաօնի ամեն իրաւունքի ընդունակ տղամարդ 14 տարեկան հասակից սկսած: Այս կամ այն հարցի քւէարկութեան ժամանակ ներկայ եղողները բաժանում էին երկուսի՝ համաձայն և անհամաձայն մասերի. ապա ջոկ-ջոկ հաշուում էին այդ մասերը և օրէնքը միշտ ընդունուում կամ մերժում էր ձայնի մեծամասնութեամբ: Ուրիշ կանաօններում խորհուրդը իր գեսպաններն ուղար-

կում էր բոլոր համայնքները հարցափորձելու դիւղացիներին՝ թէ համաձայն են արդեօք նրանք այս ինչ օրէնքը, խորհրդի այս ինչ առաջարկութիւնը կամ որոշումն ընդունելու: Ամբողջ ազգաբնակութեան այդպիսի հարցափորձը կոչւում է րէմբէրէնուում. բէֆէրէնդումն այդ դէպքում արտայայտում էր ոչ միայն ընտրեալների խորհրդի, այլ ամբողջ ընակչութեան կարծիքը և վըճուական զօրութիւն ունէր: Մի քանի ուրիշ կանաօններում սովորութիւն կար ամառը հերթով զանազան քաղաքներ հաւաքւել և լիազօրներից ազգային ժողով կազմել: Մի քանի կանոնների այդ ազգային ժողովներն իրենց բոլոր ամենալուրջ վճիռներն ուղարկում էին համայնքներն ի հաստատութիւն և միայն նրանց համագումարներն իրաւունք ունէին յանձին իրենց վերին իշխանութեան ընդունել կամ մերժել ազգային ժողովների վճիռները: Սակայն, ժողովրդական համագումարները չէին սահմանափակւում իրենց հաւանագումարները կամ մերժումը տալով այդ ժողովների վճիռներին, այլև յաճախ շատ խնդիրներ հանգամանօրէն բննուում ու լուսաբանուում էին: Այդպիսով, բոլոր կանոններում—մի քանիսում անմիջական, միւսներում ընտրւածների խորհրդի, ազգային ժողովների, ժողովրդական բէֆէրէնդումի օգնութեամբ—ժողովուրդն ամեն տեղ ամենաեռանգուն մասնակցութիւն էր ունենում իր կանոննի կառավարութեան մէջ:

Երկար ժամանակ Զւիցերիայի կանտօններն ապրում էին միանգամայն տարբեր կեանքով. ոչինչ կապակցութիւն չկար նրանց մէջ. Միանալու առաջին օրինակը տեսն Ուրի, Շվից, Ունտերվալդէն կանտօնները, իրար մէջ դաշն կռելով. նրանք ոչ միայն իրար օգնում էին հարևանների դէմ կռւելու ժամանակ, և միջնորդ դատարանի միջոցով հարթում իրենց փոխադարձ տարածայնութիւնները՝ այլ և միասին մշակում էին բոլորի համար ընդհանուր քրէական օրէնքները: Միւս կանտօններում նման միութիւն չկար դեռ. հետզհետէ միայն, այդ անտառային երեք կանտօններին ամենամօտ գտնւածները՝ զւիցերական հողերը միացրին նրանց դաշնակցութեանը: Այդ դաշնակցական պայմանագրի մէջ ամենից առաջ սահմաննեած էր, որ իւրաքանչիւր դաշնակից պատերազմի ժամանակ պարտաւոր է օգնութեան հասնել իր վտանգւած դաշնակցին: Ամբողջ դաշնակցական գործերը վարում էր ընդհանուր աղգային ժողովը. վերջինս կազմում էր ամեն կանտօնից ուղարկւած եղկուական պատգամաւորներից: Ամեն կանտօն իր ներքին գործերի ու իր վարչութեան մէջ լիակատար ազատութիւն էր վայելում: Այդպիսի դաշնակցութեամբ շուտով միացան 13 կանտօններ. բայց չնայելով դրան, կանտօնների ներքին կեանքը դասաւորւում էր շատ տարբեր եղանակներով. մինչդեռ զիւղացի-լեռնարնակներն ու անտառային կանտօնները շա-

րունակում էին յարգել ժողովրդական ազատութիւնը, հարուստ առևտրա-արդիւնաբերական կանտօններում շարունակ ունեոր քաղաքացիների ազգեցութիւնն էր աւելանում և նրանց բնակիչները XVII դարում ստիպւած էին ժողովրդական ազատութեան ճնշման դառն օրեր տեսնել: Մի հանգամանք մանաւանդ շատ նպաստեց հինաւուրց ժողովրդապետութեան քայլայմանը. լեռներում ապաւինած Զւիցերիային երբէք հարևանների արշաւանքը չէր սպասնում, ուստի և նա մշտական գօրքի կարիքը չունէր. մինչդեռ ալպիական որսկանները միշտ հոչակւած էին որպէս հիանալի գէնք բանեցնողներ. հարևանների բոլոր կոփիւներում, ուր նրանք մասնակցել են՝ իրենց քաջութեան ու դիմացկանութեան շնորհիւ զւիցերացիք միշտ հանդիսացել են անդրդւելի զօրաբանական պատճառով եւրոպական թագաւորներն իրենց պատերազմների համար յաճախ զւիցերական առանձին գումարտակները էին վարձում: Ծառայութիւնը շատ շահաւէտ էր, և նըման կամաւոր վարձկան գումարտակներ հետըզհետէ աւելի էին կազմուում: Նատ անւանի մարդկան հաւաքում էին այդպիսի գումարտակներ և դիկ հաւաքում էին այդպիսի գումարտակներ և դիկ կողմից ծախում օտարներին, այդպիսով իրենց կողմից ծախում օտարներին, այդպիսով վաճառքի հանելով իրենց քաղաքացիների ու ժողովածառքի հանելով իրենց քաղաքացիների և արիւնը. յաճախ այդ դոփրդի քաջութիւնը և արիւնը. յաճախ այդ դոփրդի քաջութիւնը մասնակցում էին անդադար կը-գումարտակները մասնակցում էին անդադար կը-դիկ այդպիսով արատաւորում Զւիցերի-ուիւների և այդպիսով արատաւորում Զւիցերի-

այի պատիւը: Այդ բոլորն ահա անբարոյականացնում էր ազգաբնակութեանը և հարուստ քաղաքացիներին հնարաւորութիւն տալիս հէնց իր ժողովրդին սպառնակըներ կարդալ ուազմական ուժով: Այնպէս որ շատ քաղաքներում խորհուրդը մի քանի ընտանիքների ձեռքում կենարօնացաւ, և նրա վճիռներն այլ ևս համայնքներ չէին ուղարկում ի հաստատութիւն. աւելի վատթարը՝ քաղաքային խորհուրդներն սկսան արդելել զիւղիներին պարապել այս կամ այն արհեստով, որը միայն բացառապէս քաղաքացիների մենաշնորհն էր համարւում: Ինքը քաղաքային վարչութիւնը ծախու դարձաւ և խորհրդի անդամները ուշադիր վերաբերում էին միայն դէպի այն քաղաքացիների զեկուցումները, որոնք նրանց ընծաներ էին բերում: Դատաւորները կաշառքով արդարացնում էին գողերին. դատի ենթարկւածները վճիռներն իրենց օգտին դարձնելու նպատակով, դատաւորներին շաբարի գլուխներ, գեր ննդունաւեր, նապաստակներ, այծեամներ... էին ընծայաբերում:

Գիւղացի դասակարգը քայքայւում էր անիրաւ հարկերից. զիւղական կացարաններն սկսան գագանների որջերի նմանիլ, սովու ու մերկութիւնը տարածւեցին զիւղերում ու քաղաքներում. փողոցներով աւազակների վոհմակներ էին վըստում: Համայնական ժողովներն աւելի բարձր ու պահանջկոտ էին յայտարարում իրենց դժողովու-

թիւնը, և գիւղացիութեան արգահատանքը, վերջապէս, դուրս ժայթքեց համարեա ընդհանուր ապստամբութեամբ:

Որպէսպի իրենց բոլոր անբաւականութիւնը բարձրածայն արտայայտեն, որոշեցին ընդհանուր զաշնակցական համագումար հրաւիրել: Բաց երկնքի տակ սկզբում հաւաքւեցին 1000 գիւղացիներ. նրանք դաշնակցական պայմանագիր կազմեցին և այդ հաստատեցին հանդիսաւոր երգումով: Մի քանի օրւայ մէջ 5000 հոգու մի նոր ժողով պնդեց նոյն այդ պայմանագիրը: Ժողովուրդը լաւ էր հասկանում իր իրաւունքները. դառն փորձով նա համոզւել էր, որ հարուստ քաղաքացիների խորհուրդներով • կառավարուող կանտոնների ժողովուրդն աւելի վատթար կացութեան մէջ է, քան այն կանտոններինը, ուր բոլոր գործերը վճռուում էին համայնական ժողովներում, և որտեղ իւրաքանչիւր հովիւ իր ձայնն էր տալիս, ուր ամբողջ ժողովուրդն էր ընտրում պաշտօնական բոլոր անձերին: Ժողովուրդը քաղցրութեամբ էր յիշում իր հինաւուրց դաշնագրերը, որոնց շնորհիւ ժողովրդական իրաւունքները նախկին դարերում անազարտ էին մնում և կամայականութիւնն ու հարուստների իշխանութիւնն անթոյլատրելի էին. ժողովուրդը չէր մոռացել իր առաջւան ազատ օրերը:

Գուտպիլեան ժողովում զիւղացիք պարզապէս ասացին. «Մենք պէտք է կուենք մինչև մեր

մահը բոլոր ճնշումների ու ոտնձգութիւնների դէմ, ինչպէս կուել են մեր հայրերն ու նախահայրերը: Մենք պահանջում ենք, որ մեզ վերադարձնեն մեր նախնական ազատութիւնը, մեր ժողովրդական անկաշառ դատարանը: Մենք ցանկանում ենք ապրել մեր եղբայրակիցների՝ Ցիւրիցիների ու Բագէցիների դաշնակցութեամբ, որպէս նախկին զւիցերացիք էին ապրում, որոնք մի քանի դար առաջ Գրիւտի հովտում երդւեցին, որ հաւատարիմ դաշնակիցներ կլինեն»:

Բայց և այնպէս XVII դարի գիւղացիական այդ ապստամբութիւնը չկարողացաւ ազատութիւնը վերականգնել առևտրա-արդիւնաբերական կանոններում. այդտեղ հարստացած քաղաքացիք ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում, որպէս զի ճնշեն գիւղացիական շարժումներն ու իշխանութիւնն իրենց ձեռքը պահեն: Նրանք բանտարկում էին գիւղացիական պարագլուխներին, տանչում ու մեռյնում նրանց, գիւղացիների դէմ զօրք էին հանում, և քանի որ զւիցերական զինուորները երբեմն հրաժարում էին իրենց եղբայրների ու հայրերի վրա հրացան արձակել, ապա վաճառականները վարձկան զօրքեր էին հրաւիրում օտարներից. ամեն տեսակ բռնութիւններով նրանք ստիպեցին գիւղացիներին խոնարհել, առ ժամանակ, բիրտ ուժի առաջ և լոել: Սակայն որոշ ժամանակներում ապստամբութիւնները նորէն բռնկում էին և ժողովրդի այդ կոփւն իր ա-

զատութեան, իր իրաւունքների համար, կարձ ընդմիջումներով մինչև XVIII դարի վերջը շարունակւեց: Պայքարն ուժեղ էր մանաւանդ ժընելում, Յերնում, Ֆրէյբուրգում. այդտեղ զիւղացիական ազատութիւնը պաշտպանելու ձայն բարձրացրին այն ժամանակի յայտնի գրողներն ու մտածողները, նրանց միջից ամբողջ Եւրոպայի վրա ամենաուժեղ հնչում էր ազատամարտի նըշանաւոր առաքեալի — Բուսսօի ձայնը:

V

XVIII դարը դէպ իր երկրորդ կէմն էր թեքւել, երբ հնչեց ժընեվեան զրողի կարող խօսքը. «Ամեն օրէնք, որ ժողովրդի կողմից չի հաստաւած, չի կարող ոյժ ունենալ, — դա օրէնք չէ: Ժողովրդի ներկայացուցիչները չէ, այլ ժողովրդինք միայն կարող է վերջնական վճիռներ կայցնել և նրանց օրէնքների ոյժ տալ»:

Բերնի ու Ֆրէյբուրգի ապստամբութիւնն իր կատաղի պայքարի մէջն էր, երբ հանդէս են կաւ Բուսսօի խիզախ ու հրապուրիչ լեզով զըրած «Հասարակական Դաշինք» աշխատութիւնը: Այստեղ իւրաքանչիւր պետական շէնքի հիմք ընդունում էր ժողովրդի ազատ դաշնաբրութիւնը, այն փոխադարձ համաձայնութեան դաշնապիրը, որով իշխանութիւնը յանձնուում է ժողովրդի ընտրած կառավարութեանը: Բուսսօն առա-

ջինը վստահացաւ ասել, թէ պետական կազմը ոչ
մի երկրում անշարժ ու անփոփոխ լինել չի կա-
րող, — նա ամբողջովին՝ ժողովրդի կամքիցն է կախ-
ւած, ժողովուրդն ազատ կտրող է փոխել նրան.
Նա միայն իրաւունք և իշխանութիւն ունի պե-
տական այս կամ այն կազմը հիմնել իր երկրում:
Բուսսօի աշխատութիւններն ահազին նշանակու-
թիւն ունեցան այն ժամանակի հասարակական
մտքի վրա:

XVIII դարի վերջին բռնկեց Ֆրանսիական
Մեծ Յեղափոխութիւնը: Նա խորտակեց կեանքի
բոլոր հին կարգերը, թոթափեց արքայական կա-
ռավարութիւնը և Հանրապետութիւնը, ուամկա-
պետութիւն հաստատեց: Ազատական հովերը
Ֆրանսիայից անցան ամբողջ Եւրոպայի վրայով.
ամենքը խօսում էին մարդկային և ազգային իրա-
ւունքների մասին: Զւիցերիայում ժողովրդական
դժգոհութիւնը դուրս խուժեց յախոււն թափով:
Ֆրանսիայի մերձակայ կանոնները երազում էին
իրենց ժողովրդապետութիւնը վերականգնել ֆրան-
սիայի օգնութեամբ: Բայց աւանդ. Ֆրանսիական
Առաջին Հասարակապետութիւնը շուտով գեներալ
Բօնապարտի միահեծան իշխանութեան փոխեց,
որ յետոյ կայսը դարձաւ, Նապոլէօն I: Վաղուց
նա ցանկանում էր տիրել այն արգաւանդ երկրին,
որ անմատչելի լեռների վրա էր տարածւած. նրա
աշխարհակալական անսահման ձգտումների համար
ահազին յարմարութիւն էր ալպիական բոլոր կիր-

ճերին տիրանալը, որոնք հնարաւորութիւն կտային
Գերմանիա և Իտալիա մուտք գործել: Ժողովր-
դական ազատութիւնն ապահովելը պատրւակելով,
Նապոլէօնը զօրքերով գրաւեց Ֆրանսիային ամե-
նամօտ Զւիցերական հողերը ժընեվեան լճով և
Բերն կանոնով: Ամբողջ Զւիցերեան 1798 թվին
նա յայտարարեց միացեալ Հելվեցիա հանրապե-
տութիւն, միակ և անբաժանելի: Օրէնսդրական
իշխանութիւնը տրւեց Սենատին և Մեծ Խորհր-
դին, իսկ կաաարողական իշխանութիւնը 5 մար-
դուց բաղկացած մի վարչութեան: Այդ 5 մար-
դիկ ինքներն էին ընտրում նախարարներին, զին-
ւորական գլխաւորներին և ամեն կանոնի կառա-
վարիչներին: Այդպիսի հանրապետութիւնը միան-
գամայն տարբեր էր այն ժողովրդական ինքնա-
վարութիւնից, որին ձգտում էին զւիցերացիք.
սակայն նրանց առաջ աւելի ծանր անախորժու-
թիւններ կային. — Ֆրանսիան շուտով պատերազմ
յայտարարեց Աւստրիային, և երկու պատերազ-
մող կողմերն իրենց զօրքերով թափւեցին Զւիցե-
րիա, Աւստրիան մինչև անդամ զրաւեց իր զօր-
քերի բռնած Ցիւրիխեան մասը: Զօրքը ոտքի
տակ արորեց ցանքսը, վշացըրեց խաղողի այգի-
ները: Զւիցերացիք դժկամակում էին և փորձե-
ցին մասնակի փոփոխութիւն գոնէ մտցնել իրենց
կաշկանդող պետական կազմի մէջ: Կարճ ժամա-
նակում Զւիցերիայի ամբողջ կառավարութիւնը,
հասարակական շարժումներից սարսափած, ստիպ-

ւած եղաւ փախչել և նորից Նապօլէօնին օգնութեան դիմեց: Փարիզում մշակւեց Զւիցերական նոր սահմանադրութիւն: Այս անդամ արդէն Զւիցերիան հանդէս էր գալիս ոչ իբրև ամբողջական պետութիւն, այլ իբրև դաշնակցութիւն կամ, ինչպէս հիմա են ասում, ֆէդէրացիա, կանոններից կազմւած: Խւրաքանչիւր կանոն իր ներքին գործերում օգտում էր անկախ ինքնավարութեամբ: Դաշնակցական-Ընդհանուր ժողովին կանոնները ուղարկում էին իրենց ներկայացուցիչներին. որտեղ բնակիչների թիւը 10,000 աւելի էր՝ 2, որտեղ պակաս՝ 1 պատգամաւոր: Դաշնակցութեան գլուխ կանոնած էր վիճակային վարչութեան (զէմստվօ) նախագահը (այսպէս կոչւած լանդամանը), կանոնները պարտաւոր էին ներթով ընտրել նրան մի տարով:

Իր միջնորդութեան փոխարէն Նապօլէօն պահանջեց, որ Զւիցերիան 160,000 հոգուց մի զօրաբանակ տայ իրեն: Այդ պարտականութիւնը ծանր բեռի նման ճնշում էր զւիցերացիներին, և հէնց որ Նապօլէօն I ընկաւ, նրանք նրաժարեցին ամեն նման կապակցութիւնից և իրենց երկիրն անձեռնմխելի յայտարարեցին որ և է պատերազմող հարեանի համար: Եւրոպական բոլոր թագաւորները 1815 թիւն վկեննայի համագումարում ընդունեցին Զւիցերիայի անձեռնմխելիութիւնը կամ նրա չեզո՞ւթիւնը: Այն պետական կազմը, որ Նապօլէօնը մացրել էր Զւիցերիայում

ընկաւ. նա չափազանց հակասում էր անկախութեան այն հիմնական օրէնքներին, որին ձգտում էին բոլոր կանոնները: Նոր դաշնագիրը եղական մեռած հանրապետութիւնը՝ Հելվեցիան, նորէն փոխեց բազմաթիւ զւիցերական հանրապետութեանց դաշնակցութեան: Սակայն ժողովրդական ինքնավարութեան սկիզբը մասամբ յաղթահարւած էր ժամանակակից Եւրոպայի ազգեցութեան տակ, ուր ժողովրդական ազատութիւնը ճնշւած էր:

Ֆրանսիայի 1830 թւի նոր յեղափոխութիւնը Զւիցերիայում ընդունեց բուռն համակրանքով: Ամեն բան տարուքերեւեց, կենդանացաւ, խեղատող մթնոլորտը վերացաւ, նորէն ազատութիւնը բուրեց և Զւիցերիայի ժողովուրդը նորէն սկսաւ թեակոխել իր ընդհանուր հաւասարութեան, ընդհանուր ազատութեան նախկին իրաւունքների շրջանը: 12 կանոննում ժողովրդական կառավարութիւնը վերականգնեց առանց որևէ արիւնհեղութեան: Սակայն, կանոններն այժմ ձգտում էին ոչ միայն իրենց ներքին բարեփոխութեան, այլ և ընդհանուր — դաշնակցական դաշնագրի փոփոխման: Պարզ ու որոշակի ցոյց էին տալիս, որ դաշնակցութեան համագումարի ընտրւած անդամների իրաւունքները երբէք չպէտք է զերազանցեն նրանց ընտրող ամբողջ ժողովրդի զերազոյն իրաւունքներից: Դաշնակցական նոր կազմը շատ նմանում էր Հիւսիսային Ամերիկայի

Ո՞ւ իացեալ Նահանգների դաշնակցութեամբ: Նախ-
կին ազգային ժողովս այժմ փոխարինւած էր
դաշնակցական համագումարով, որ բաղկացած էր
ազգային խորհրդից՝ զւիցերական ամբողջ ժողո-
վրդի պատգամաւորներից կազմւած և իւրաքան-
չիւր կանտօնից երկուական ներկայացուցիչներից
կազմւած դաշնակցական խորհրդից: Ազգային ժո-
ղովի համար ամեն 20,000 հոգի ընտրում էր մէկ
պատգամաւոր: Ընտրութիւններն ամեն տեղ ու-
ղիղ էին (անմիջական), դատաստանի չենթարկ-
ւած ամեն քաղաքացի, 20-ից ոչ պակաս տարի-
քով, իրաւունք ունէր ընտրութիւններին մաս-
նակցելու: Դաշնակցական համագումարն ընտրում
էր 7 հոգուց բաղկացած դաշնակցական կամ ֆէ-
դէրատիվ խորհուրդ. Նրան էր յանձնւում երկրի
կառավարութիւնը կատարողական ոյժով: Այդ
խորհրդի նախագահն ընտրւում էր ամեն տարի:
Նա հանդիսանում էր ամբողջ Զւիցերական դաշ-
նակցութեան ներկայացուցիչ. ուրիշ պետութիւն-
ների հետ յարաբերութիւնները կատարւում էին
Նրա միջոցով: Կանտօնների մէջ տեղի ունեցող
վէճերն ու տարածայնութիւնները պարզելու հա-
մար գոյութիւն ունէին միջնորդ կամ դաշնակ-
ցական դատարան, նոյնպէս ընտրւած մարդկան-
ցից, թէ և ոչ խորհրդի անդամներից: Ազգային
խորհրդի անդամներն իրենց ծառայութեան համար
վարձարութիւն ստանում էին դաշնակցական
գանձարանից, իսկ դաշնակցական խորհրդի ան-

դամները — կանտօնային միջոցներից: Երկու խոր-
հուրդն էլ իրենց նիստերն առանձին էին ունե-
նում և միանում էին որոշ հարցերում միայն: 5
տարուց աւելի Զւիցերիայում ապրող օտարները
նոյնպէս իրաւունք էին ստանում ժողովրդական
վարչական խնդիրներին մասնակցելու: Այժմ դաշ-
նակցութեան գործունէութիւնն աւելի ընդարձակ
էր, քան առաջ. դաշնակցութիւնը ոչ միայն եր-
կիրն արտաքին (հարեանների) վտանգից պաշտ-
պանելու համար էր, այլ և դաշնակիցների մէջ
կարգ և խաղաղութիւն պահպանելու, Զւիցերիայի
ազգաբնակութեան իրաւունքն ու ազատութիւնը
հովանաւորելու, նրա վրա էր ծանրացած ամբողջ
երկրի լուսաւորութեան և արդիւնաբերութեան
զարգացման գործը: Դաշնակցութիւնը կարող էր
միայն պատերազմ յայտարարել և խաղաղութիւն
կնքել: Սակայն, տեղական ոստիկանական և ա-
ռևստրական դաշինքները հարևան պետութիւնների
հետ կարող էին կնքել և կանտօնները: Դաշնակ-
ցական մշտական զօրք թէկ գոյութիւն չունէր, բայց
և այնպէս մի կանտօնի պաշտպանութեան համար
անյապաղ կոչում էին և միւս կանտօնների զ-
րաբաժինները, իսկ զինւորական ծախքերը բա-
ժանում էին դաշնակիցների վրա:

Արտաքին լուրջ անակնկալների ժամանակ
գործում էր կամ դաշնակցական խորհուրդը, կամ
թէ այդ առթիւ հրաւիրւած դաշնակցական հա-
մագումարը: Վերջինս նշանակում էր զօրքի գըլ-

խաւոր հրամանատարին և գեներալների շտաբի գլխաւորին: Ամեն կանոն հանում էր իր ռազմական ոյժը և դրանցից կազմւում էր դաշնակցական զօրքը. դաշնակցական զօրքն ունէր իր դաշնակցական դրօշակը:

Դաշնակցական խորհուրդն ամբողջ երկրի համար կտրում էր դրամ, պատրաստում ու վաճառում էր վառօղը, ձեռք էր առնում ընդհանուր սանիտարական և ոստիկանական միջոցներ վարակիչ հիւանդութիւններից նախազգուշացնելու և նրանց առաջն առնելու համար. ժողովում ու կարգադրում էր որոշած հարկերը. ամբողջ եւրոպայում ամենալաւ Պօլիտեխնիքական դպրոցն էր պահում Ցիւրիխում: Դաշնակցութեան համագումարի նիստերը կայանում էին Բեռնում, և բոլոր երեք լեզուները, որոնցով խօսում է Զւիցերիայի ազգաբնակութիւնը՝ ֆրանսերէնը, գերմաներէնը և իտալերէնը հաւասարապէս ընդունւած էին թէ համագումարում և թէ օրէնքի առաջ ու պետական բոլոր հիմնարկութիւններում: Օրէնքի առաջ բոլոր գլուխերացիք նոյնպէս հաւասար ան: Զւիցերիայում ոչինչ դասակարգային արտօնութիւն գոյութիւն չունէր. ոչ մի տոհմանուն, շրքանշան՝ ծառայութեան համար, ոչինչ բացառիկ դատարաններ չէին կարող մտցրել Զւիցերիայի ոչ մի տեղ:

15 կանոնների ընդունած այդ սահմանադրութիւնը ևս ի հարկէ, կարող էր փոփոխութեան

ենթարկւել իր առանձին կէտերի կամ ամբողջութեան մէջ, եթէ 12-ից ոչ պակաս կանոններ պահանջէին այդ:

Այդ նոր դաշնակցական կազմը չընդունեցին 6 կանոն, սակայն իբրև փոքրամասնութիւն, նըրանք էլ պարտաւոր էին հնազանդւել մեծամասնութեանը: Առ ժամանակ Զւիցերիայում թագաւորում էր խաղաղութիւնն ու համերաշխութիւնը և ժողովրդի ընտրեալ լիազօրները սրտանց գործի էին կպած. հիմնեցին մի հատ դաշնակցական փոստ-հեռագրական վարչութիւն, նոր ճանապարհներ անց կացրին ընդհանուր հաշւով, հարևան ազգերի գործակցութեամբ բարելաւեցին Ս.-Դօթարի անցքը:

Բայց և այնպէս, այդ սահմանադրութեան հետ Զւիցերիայում հաստատեց ժողովրդական լիազօրների ներկայացուցչութիւնը, իսկ ժողովրդի անմիջական մասնակցութիւնը, համայնական ժողովները, մինչև իսկ հին ռամկավար կանոններում՝ Շվից և Ուրի. — կնքցրին առաջւան նշանակութիւնը: Այդ բոլորի տեղ այժմ պահանջւում էր ըէֆէրէնդում, այսինքն ամբողջ ազգաբնակութեան հարցափորձը, այս կամ այն օրէնքն ընդունելու և հաստատելու: Շատ կանոններ իրաւունք ստացան իրենց կողմից առաջարկութիւն անելու այս կամ այն օրէնսդրական կերպը կամ վճիռը (բնակիչների յայտնի թւով, 2,000-ից ոչ պակաս): Այնպիսի կանոններ էլ կային, որ իրենց բնակ-

շութեամնն առաջարկում էին խորհրդի ընդունած-
այս կամ այն օրէնքը մերժել. այս մտքով ամեն-
հաշտարար դատաւոր կարող էր ժողովի հրաւիրել
իր շրջակայ բնակչութիւնը. այդտեղ ամեն քա-
ղաքացի ազատ էր օրէնքի մասին իր հայեցակէտն-
ասելու. Եթէ կանտօնի քաղաքացիների մեծամաս-
նութիւնը հակառակ է դուրս գալիս՝ օրէնքը վե-
րացւում է: Բնարւած ներկայացուցիչների մշա-
կած օրէնքների մերժման այդ իրաւունքը կոչ-
ւում է վետօ-ի իրաւունք: Զանազան կանտօններ-
առաջին ժամանակներում զանազան տեսակ էին
գործադրում այդ իրաւունքը. մի քանիսի համար
45 օր էր նշանակւում. այն բոլոր օրէնքները, ո-
րոնց հակառակ 45 օրւայ մէջ չի կանգնի առնը-
ւազը 10,000 քաղաքացի, համարւում են ընդուն-
ւած: Եթէ անգամ մի գեկուցում տրւի օրէնքի
դէմ,—այն ժամանակ համայնքներում ժողովրդա-
կան քւէարկութիւն են կատարում և օրէնքի
բախտը որոշւում է բոլոր համայնքների քաղա-
քացիների ձայների մեծամասնութեամբ:

Սակայն, վարչական խնդիրներում ժողովր-
դական ամենալայն մասնակցութեան փափազը
ամենից առաջ ունեցել է արխառկրատ կանտօն-
Յիւրիխը: Այստեղ համարեա բոլոր գործերն ու
օրէնքները վերջնական լուծում ստանում էին ժո-
ղովրդական ձայնտութեամբ: Ժողովուրդն իր
կողմից կարող էր նոր օրէնքներ առաջարկել (ոչ
պակաս քան 5,000 մարդու անունից), իսկ եր-

բեմն մէկ կամ մի քանի հոգու էր թողնում կան-
տօնական խորհուրդներին օրէնքների նախադիծ
ներկայացնելու իրաւունքը և, եթէ խորհրդի ^{1/3}
հաւամնութիւն կտայ, այդ օրէնքներն անցնում են
ազգային ժողովին ի քննութիւն, իսկ ազգային
ժողովի ընդունած օրէնքների ու վճիռների որո-
շումը՝ արդէն իրականութիւն է գտնում նորէն
հնարաւոր կամ պարտադիր ձայնտութեան դէպ-
րում:

Կնշանակէ մի քանի հարցեր կարելի է ամ-
բողջ ժողովրդի քւէարկութեան չդնել, իսկ միւս-
ներն անպայման պէտք է գրւեն: Այդ է, որ կոչ-
ւում է հնարաւոր և պարտադիր ձայնտութիւն:

Ցիւրիխի տուաջարկութեամբ ժողովրդական-
քւէարկութիւնը կատարւում է, տարէնը 2 ան-
գամ—աշնանը և գարնանը, բայց կարող է և այդ
հերթից գուրս էլ լինել: Համայնքներում ձայն-
տութիւնը կատարւում է արկղիկների միջոցով
և տմեն քաղաքացու պարտականութիւնն է մաս-
նակցել:

Ցիւրիխի օրինակին հետևեցին և միւս կան-
տօնները. իսկ շատերը համայնական ժողովների
վերին իշխանութիւնը վերականգնեցին: Ներկայա-
ցուցչական սիստէմի ջատագովները ստիպւած էին
զիջել և ընարեալների իշխանութիւնը սահմանա-
փակել: Անմիջական ժողովրդապետութեան պաշտ-
պաններն իրենց պահանջներն հետևեալ օրինակով
էին ապացուցում.

«Ներկայացուցչական կառավարութեան ժամանակ այնպէս է գուրս գալիս, ինչպէս շոգենաւի վրա, ուր ներկայացուցիչների խորհուրդն իր ձեռքին ըռնում է և կօմպասը և ղեկը. իսկ շոգենաւի բարձրագոյն տէրը՝ ժողովուրդն ինքը, նաւահանգստից միայն սառնասիրտ հետեւում է լողանքին: Բայց մենք, — ժողովրդականներս, — ցանկանում ենք, որ ժողովուրդն իր ձեռքն առնի կօմպասն էլ, ղեկն էլ, շարժիչ ոյժն էլ: Ժողովրդի կամքն ու ժողովրդի ազգային ողին — ահա միակ շարժիչները և անօրինողները՝ համապետական կեանքի սկզբունքների: Ներկայացուցչական ձևի կառավարութեան կողմանակիցներն անվատահեն դէպի ժողովուրդն ու նրա շնորհքը՝ շոգենաւը վարելու, իսկ մենք հաւատում ենք միմիայն ժողովրդին:

Չէ ժողովրդից են զալիս ինտելիգէնցիայի լաւագոյն ոյժերը և փայլուն գործիչներ են, երբ ժողովրդական մասսայի հետ լլակատար համաձայնութեամբ են գործում: Հետևապէս և այդ մասսայի մէջ է բնակւում ամբողջ մարդկութեան մտքի ու կորովի ստեղծագործական գլխաւոր ոյժը:

1864 թւին Զւիցերիայի ժողովուրդն սկսաւ իր սահմանադրութիւնը քննել և այդ գործը 10 տարի քաշեց: Միայն 1874 թւին նոր սահմանադրութիւնն անպայման կերպով ընդունեցին 14 կանոններ, իսկ 7 անհամաձայն կանոն հսազանդեցին մեծամասնութեանը. օրէսդրական բէ-

ֆէրէսդումն ընդունւեց. 30,000 քաղաքացիների (կամ 8 կամստօնների) առաջարկութեամբ: Դաշնակցական խորհրդի ամեն վճիռ կամ օրէնք պէտք էր ժողովրդական բէտրկութեան ենթարկել: Սակայն այդ իրաւունքը չբաւականացրեց զւիցերացիների հասունացած ու զիտակից պահանջին՝ որքան կարելի է շատ օգտւել ինքնավարութեամբ: Իսկական ժողովրդապետութեան և այն առաջ տանելու համար ամբողջ կուսակցութիւններ կազմւեցին: Նրանք պահանջում էին ոչ միայն հնարաւոր (ֆակուլտատիվ) բէֆէրէնդում, այլ պարտադիր, առանց որի ոչ մի օրէնք պարտաւորական ոյժ չի կարող ունենալ. պահանջում էին անմիջական ընտրութիւններ և ժողովրդի միջից թեկնածուներ գնելու իրաւունքը: Ազգային Խորհուրդը ստիպւած նոր սահմանադրութիւն մշակեց ժողովրդական շարժումների ողով, որ ամբողջ Զւիցերիան համակել էր: 1890 թւին այդ սահմանադրութեան մեջ գաշնակցական պայմանագրի զանազան յօդւածներ փոփոխութեան ենթարկեցին, շատ յաւելումներ կամ կրծատումներ եղան, որ լայն մասնակցութիւն էին տալիս ժողովրդին, դաշնակցութեան բոլոր խնդիրներում:

Օրէնքի որևէ յօդւածը վերացնելու կամ նորն աւելացնելու առաջարկութեան իրաւունքը ժողովրդից 50,000 քաղաքացիների համաձայնութեամբ էր պայմանաւորւում: Որպէսզի քաղաքացիների

փոքրամասնութիւնը ևս մասնակցելու իրաւունքից չզրկէք, զւիցերական օրէնսդրութեան մէջ մըացրած է մինչև անգամ փոքրածաւալ շըջանների՝ $\frac{1}{2}$ կանտօնների իրաւունքը, անգամ եթէ այդ $\frac{1}{2}$ -ը տար $\frac{1}{2}$ ձախ:

Ամբողջ այդ գուտ ռամկավարական սահմանադրութիւնը քւէարկութեան դրւեց զւիցերական բոլոր ժողովրդի կողմից և ընդունւեց 18 կանտօնով, հակառակ 4-ի:

Այժմ Զւիցերի ան բաղկացած է 19 կանտօնից և 6 կէս կանտօններից. իւրաքանչիւր կանտօն ընտրում է իր ամբողջ վարչութիւնը:

Տարեկան մի կամ երկու անգամ, գլխաւորապէս մայիսեան առաջին կիրակին, զանգահարութիւնը բոլոր բնակիչներին քաղաք է հրաւիրում: Առաւօտից ամբողջ հրապարակը լի է ժողովրդով, իսկ սարերի կածաններով դեռ էլի իջնում են շըջակայ գիւղերի ուշացած բնակիչները: Զւարթ ու աղմուկով նրանք հանդիպում են, խօսակցելով ընթացիկ հարցերի մասին ու իրենց ծխափողը ծեխով: Պատարագից յետոյ սկսում է թափօրը. — առջեից զնում են երաժշտութիւնն ու տեղական զօրքը, նրանց ետևից իշխանաւորները, որոնք զանազան նշաններ են կրում. — դատաստանական սուր, կանաչ գոյնի հողային մատեան, պայուսակ՝ գանձարանի բանալիներով, իսկ սրանց ետևից զարդարւած ու աշխոյժ ժողովուրդը: Գընում են դաշտը, քաղաքից դուրս: Ահա փողը հըն-

չում է, և ամեն ինչ կազմն է ընկնում: Բոլորը երդուում են և ժողովը բացւում է. կանտօնի գործերի տարեկան հաշիւր կարդացւում է, այնուհետեւ սկսում է գործերի խորհրդածութիւնը, որոշում են ճանապարհների հարցը, նշանակում կամ ոչնչացնում են հարկեր, և ամեն հարց վըճռում են քւէարկութեամբ: Ընտրւած դատաւորը վերցնելով դատաստանական սուրը, երդուում է, որ ամենքին անկողմնակալ կդատի. հարուստ-աղքատ, հարազատ-ուրիշ, հայրենակիցօտարահպատակ՝ անխարդախ, պատւաւոր կերպով, ոչ ոքից կաշառք կամ ընծայ չի վերցնի: Այնուհետեւ ժողովը վերջացած է համարւում. սակայն տօնախմբութիւնը շարունակում է ամբողջ օրը:

Ժողովրդական ըէֆէրէնդումը գործադրւում է ամեն ընդհանուր նշանակութիւն ունեցող կարևոր հարցերի ժամանակ: Այդպէս, սահմանեց բանւորների կեանքի ապահովագրութեան խնդիրը պետական հաշտով, ընդհանրապէս աղքատքաղաքիների՝ հիւանդութեան կամ որևէ գըժքաղտութեան դէպքում, այդ ձայնտւութիւնն էլ մերժեց կենսաթոշակիների օրէնքը, և հիմնեց միայն քաղաքական ամուսնութիւնն, եկեղեցական ծէսերով առանց այն օրնելու անհրաժեշտութեան: Ա. — Գօթարի երկաթուղային գիծը (որ երեք պետութիւնների հաշտով է անցրած) զնելու հարցը մերժեց նոյնպէս ժողովրդական ձայն-

տւութեամբ, որպէս հանրապետութեան դրամական միջոցներին չհամապատասխանող մի գործ: Ժողովրդական ձայնութեամբ էլ օղի և սպիրտ պատրաստելն ու ծախելը համարւեց դաշնակցութեան բացառիկ իրաւունքը: Այդտեղից ստացած արդիւնքը հսարաւորութիւն էր տալիս վերացնել խաղողի զինու ակցիզը, որի շնորհիւ զինին այնուհետև և մատչելի դարձաւ ամբողջ ազգաբնակութեանը, իսկ նա շատ աւելի առողջարար է օղիից: Զայնութեանն, իհարկէ, միշտ մինոյն քանակութեան ժողովուրդ չի մասնակցում. հարցեր կան, որ աւելի կամ պակաս հետաքրքրուղներ են գրաւում. ձայն տւողների թիւը լինում է գլիցերական ամբողջ ժողովրդի $63^{\circ}/_0$ — $69^{\circ}/_0$ — $72^{\circ}/_0$ և $77^{\circ}/_0$: Տարէց տարի ձայն տւող զիտակից քաղաքացիների թիւն աւելանում է: Հասարակական կեանքի պարզ և բարդ հարցերի ժողովրդի ձեռքով կատարող այդ քննութիւնները ամբողջ ժողովրդին տալիս են իսկական քաղաքական դաստիարակութիւն, և ժողովուրդը հետզհետէ աւելի լաւ և պարզ է ըմբռնում՝ թէ աեղական և թէ համայն Զւիցերիայի բոլոր կարիքները: Նա գիտէ թէ երբ պէտք է հետևել իր ներկայացուցիչներին և երբ մերժել նրանց առաջարկութիւնները: Ոչ մի քաղաքական կուսակցութիւն չի կարող կուրացնել նրան իր չափից վեր հմայիչ առաջարկութիւններով, չի կարող ստիպել, որ նա կուրօրէն հետևի իր պարագլուխներին.— գլիցերացի ժողովուրդն

ինքը, անկախ ամեն տեսակ արտաքին ազգեցութիւնից՝ կարող է իր կարիքներն ու պահանջները լուծել:

Փոքրիկ ուսմկավար (ժողովրդով կառավարող) Զւիցերիան ոչ միայն իր բոլոր հարկանների համակրանքն է վայելում, այլ և նշանաւոր տեղ է բոնում Եւրոպայի հասարակական և մատաւոր կեանքում: Եւրոպայի բոլոր ազգերը, որ այնքան երկար հեծել են զանազան բռնականների լծի տակ ու մինչև այսօր իսկական ժողովրդապետութիւն ու գտել՝ կենդանի հետաքրքրութեամբ միշտ հետեւ են թէ փոքրիկ, լեռներում թագնւած հանրապետութիւնն ինչպէս յաջող լուծեց ժողովրդի երկիրը կառավարելում անմիջական մասնամբողջ երկիրը կառավարելում հարցը, մի հարց, որ բռնակցութիւն ունենալու հարցը, մի հարց, որ բռնութիւնը աղգերի գիտակցական քաղաքական ձգտումների ամենաառաջին նպատակը պիտի լինի:

Ազատ Զւիցերիայի բաղաքներում, հեռու հաւածանքներից, ապրում են զանազան երկրներից եկած մարդիկ. գրանք իրենց երկրից աքսորւածներն են, ազատ մտքի ու ազատ հայեացքների համար. այդտեղ կարդացում են ամենաազատ գրւածքները՝ գիրք, ամսագիր, լրագիր, Եւրոպական բոլոր լեզուներով: Զւիցերիայում ամեն տարի բազմամարդ միտինգներ են լինում ամբողջ աշխարհի առաջնակարգ մարդկանցից, ազատ մտքի մարտիկներից, միջազգային բանուրութեան պատութեան ջատագովներից:

Զւիցերիայի առաջարկութեամբ հիմնւել են ամենամարդասիրական հաստատութիւններ. միշագգային կարմիր Խաչ—որ օգնութիւն է հասցնում ամեն պատերազմի բոլոր վիրաւորներին, քանորական Միջազգային Դատարան կամ, այսպէս կոչւած, Խնտէրնացիօնալ: Զւիցերիան առաջարկել է նոյնպէս ընդհանուր փոստ-հեռագրական դաշնակցութիւն՝ ամեն տեսակ գրագրութիւն շուտափոյտ ցրւելու համար: Զւիցերիան միշտ առաջինն է յիշեցրել բոլոր երկրների մարդկանց և բոլոր ազգութիւններին, որ նրանք եղբայրներ են. որ, իրենց ներքին գործերից ու նոդսերից զատ նրանց վրա ընկնում են ընդհանուր մարդկային պարտականութիւններ էլ, պարտականութիւններ՝ ամբողջ մարդկութեան ցաւ ու տառապանքները թեթևացնելու վսեմ գործում փոխադարձ օգնութիւններ չզլանալ. դիւրացնելու համաշխարհային փոխադարձ յարաբերութիւնները, մարդկային մտքին ազատ թոփշներ և գեղարւեստական ստեղծագործութեանը արձակ թափ հաղորդելու: Ամենաազատ խօսքը միշտ Զւիցերիայում է հնչել: Խուճները, մանաւանդ, պէտք է երախտագէտ գտնւեն այդ փոքրիկ երկրին. որպիսի սիրով հիւրընկալել է նա երկար տարիներ ուսւաց հոչակաւոր աքսորականներին. Գերցենը, Բակունինը, Դրագօմանօվը և ազատութեան ուրիշ շատ մարտիկներ ապրել են Զւիցերիայում. այնտեղ տպագրել են իրենց ազատ գրքերը, ո-

ըոնք ոռւսաց մէջ քաղաքական կեանք առաջնորդուն այնքան նպաստել են *):

VI

Զւիցերիայի բոլոր բնակիչները, ինչպէս վերն էլ ասացինք, թւով Յ միլիոն են. Նրանցից 200,000 աւելի օտարներ են: Իրենք զւիցերացիք երկու ցեղի են պատկանում՝ բօմանական և գերմանական. խօսում են երեք լեզուներով՝ իտալերէն, գերմաններէն և ֆրանսերէն. այդ բանը բոլորովին չի խանգարում, որ նրանք շատ սերտ դաշնակցութեամբ ապրեն, մի դաշնակցութիւն, ուր այս կամ այն լեզուն չի ոտնահարուում, այս կամ այն ազգայնական առանձնայտկութիւնները չեն արհամարհուում կամ ստորացւում: Նրանք ապրում են քաղաքներում, գիւղերում և լեռներում ցըւած առանձին սննակներում: Բոլոր գիւղական համայնքները մօտաւորապէս 3185 են: Զւիցերիան քաղաքներ շատ ունի, բայց միայն երեքն են՝ Բաղէլը, Ժընեվը, Ցիւրիխը, որ 100,000-ից աւելի բնակիչ ունեն:

Զւիցերացին շատ աշխատասէր է և ամենառանդրւն կերպով մշակում է բոլոր իր դաշտերն

*) Հայկական ազատամարտը ևս գեռ մինչեւ այսօր էլ իր ամենաընդարձակ գործունէութիւնը վարել է աշատ Զւիցերիայում:

ու լեռնաթիկունքները. ամբողջ հողի 71% գործադրում և արդիւնք է տալիս. վար ու ցանքսի գնում է 16%, իսկ արօտատեղեր ու մարդագետիններ 36%: Նատ մշակում են խաղող, հարաւում աւելի չափով. պարապում են նոյնպէս շերամապահութեամբ և մանաւանդ սիրում են մեղւապահութիւնը: Ալպիական գեղեցկատեսիլ մարդագետիններում պահում են շատ անասուն, որ արածում է անուշահոտ համեղ խոտ, որից և զւիցերական կովերի կաթը մի առանձին համ ու մննդարաբութիւն է ունենում: Զւիցերիան վաղուց հոչակւած է յայտնի զւիցերական պանրի պատրաստութեամբ: Փայտից կամ փայտի մէջ քանդակելը անտառային կանտօններում նոյնպէս շատ է տարածւած և լեռնային տնայնագործները գեղարւեստական գեղեցկութեան են հասցնում այդ արւեստը, մանաւանդ վայրի այծեամների ու արջերի՝ զւիցերական անմարդաբնակ լեռների այդ սիրելի բնակիչների փորագրութիւնը: Այժմ, սակայն, յափիտենական ձեան սահմաններից ներքե դժւար է Զւիցերիայում ամայի տեղ գտնել:

Ամեն երկրից հիւանդներ են գնում այնտեղ բժշկւելու: Ամեն տեղ հիւրանոցներ կան շինւած, ճանապարհորդները վերև տանող մեքենաների օգնութեամբ, կամ հէսց ոտքով, ուղեցոյցների առաջնորդութեամբ միշտ բարձրանում են երեմն անմատչելի ու անյաղթ լերկ ապառաժները: Այնտեղ, ուր մի ժամանակ

մուտք էր գործում ալպիական անվախ որսկանը միայն վայրի այծեամների յետեկից հետապնդելով՝ այժմ զւիցերացի բանւորների տոկուն զանգերով հիւանալի ճանապարհներ են շինւած, անդունդների ու փլատակների վրայով ապահով կամուրջներ անցրած, բարձր քարաժայուերի միջով անթիւ տունեներ ու առաջւայ անմատչելի բարձունքներում հիւանդների ու թուլակազմների համար յարմարաւոր ապաստարաններ են կառուցւած: Այնտեղ նրանց գեղերով չէ, որ բժշկում են, — այնտեղ լեռների մաքուր օդն է կազդուրում նրանց, յագեցած փշեայ անտառների խիժոտ հոտով ու մարդագետինների բուրմունքով: Հիւանդների հոգիներին զւարթութիւն ու հանգիստ է տալիս ալպիական սարերի վեհ ու անդորր գեղեցւալիս արժեալու: Լեռներ, որ իրենց լերկ կատարները, կութիւնը. լեռներ, որ իրենց լերկ կատարները, պատւած մշտնջենական ձեան ու սառցի փայլվլուն պսակով՝ մինչև երկինք են հասցնում: Խորունկ մինչև մէջ արտացոլում են նրանց լանջերն ու բարձունքները: Սքանչելի են այդ բարձունքները, մանաւանդ, երբ մայր մտնող արևը զրկելով իր հրաժեշտի վերջին շողերը, կարմբոտում է նրանց վերջալոյսի քնքոյշ վարդագոյն փայլով, որ վարդագոյն ամենախօլ աղջամղջից փոխւում է վարդիրանու ոսկեգոյն փայլի: Վերջալոյսի այդ պահերին, բովանդակ լեռնաստանը կախարդական գեղեցկութեան բնոյթ է ստանում: Լուսութիւնը վըրդովում են ջրվէժի աղմուկն ու փոքրիկ զանդակ-

ների մեղմիկ դողանջիւնը, որ լսում է արօտներից դարձող անասունների միջից: Բնութեան այդ վեհութեան առաջ մարդու մի առանձին զգացում է պաշարում. միտքը սլանում է վեր, այն բարձրն ու գեղեցիկն ըմբռներու, իսկ ընթացիկ մանր հոգսերը՝ բարեբախտ վիճակի ետևից այնքան անհանգիստ վազքը,—շատ հեռու են բաշւում: Իզուր չէին բոլոր երկրների բանաստեղծները սիրով այցելում այդ լեռները. այդտեղ են դասաւորել նրանց ստեղծագործող հոգիներում ամենահոյակապ պօէմները, որ նրանց խօսքի ոյժն են հոչակել. —այդտեղ են Գեօթէն, Բայրօնը գրել իրենց ամենաստաղանդաւոր երկերը...

Զւիցերիայի հովիտներում եռում է այլ կեանք՝ առևտրա - արդիւնաբերական կեանքը: Բազմաթիւ ֆաբրիկաներ ու գործարաններ աղմկում են նրա բոլոր քաղաքներում ու աւաններում. յաճախ նրանք մեկուսացած կանգնած են այս կամ այն լեռնային գետակի կամ ջրվէժի կողքին, օդտելով նրա ընկնող ջրի ոյժից, որ շարժեն իրենց մեքենաները: Սյդտեղ գործում են ոստայնանկութեան ու մանւածքի անթիւ գործիքներ, մեքենագործութեան արհեստանոցներ, թղթի ֆաբրիկաներ. նոյնպէս մնաղի մթերք մատակարարող ֆաբրիկաներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում է թանձրացնող կաթնաշաքարինը և այլն:

Շատ դարերից իվեր արդէն ժընեփն ու Նօվշաթելը յայտնի են ամբողջ աշխարհին ժամա-

ցոյց շինելով: Ամեն ձեի, մեծութեան ու արժէքի ժամացոյցներ շինուում են, սկսած հասարակ, քի ժամացոյցներից 2 ր. արժէքով և մինչև շքեղ աղամանդներով զարդարած 3 և 4 հազար գների: Բազէլը հոչակւած է իր տպարաններով, ապակիափայլ աղիւաններով և վայտի փորագրութիւնով: Զւիցերիայի լեռները շատ հարուստ են քարէ ածուխով, երկաթով, աղաքարով, մարմարիոնով ածուխով, եղիսակով, աղաքարով: Շատ աղբիւրու զանազան թանգագին քարերով: Շատ աղբիւրներ ու ջրեր Զւիցերիայում օժտւած են առողջարար աղերով և կաշի ու ստամոքսային բազմաթիւ հիւանդներ են զրաւում: Լեռնաբնակչութիւն համայնքներում անբաւարար մննդից շատ հիւանդներ կան, — ապուշներ, մտաւոր թոյլ ընդունակութիւններով, վատ յիշողութեամբ ու խառը ոճով: Նրանց համար առանձին ապաստարաններ և դպրոցներ կան շինած, ուր նրանք և բժշկում են և սովորում են: Աշխատեցնելով ու հետեւով, նրանց զարգացնում և վարժեցնում են այլ և այլ աշխատանքների:

Առ հասարակ իր դպրոցներով ու դասագրըքերով Զւիցերիան երկար ժամանակ Եւրոպայում առաջին տեղն էր բռնում: Դպրոցն ու նրա գործը կամատօնական ամբողջ վարչութեան գլխաւոր հոգան են կազմում: Զւիցերական որ քաղաքում կուգէք, ամենապեղեցիկ շինութիւնն անպատճառ ուսումնարան է: Վարժարան, ճեմարան, համալ-

սարան, պօլիտեխնիկում—այդ բոլորը հոյակապ շէնքերի մէջ են ամբողջ Զւիցերիայի զանագան քաղաքներում: Իւրաքանչիւր գիւղում, եթէ 20 երեխայ կը հաւաքւի, համայնքի խորհուրդն արդէն պարտաւոր է դպրոց բանալ և ուսուցիչ հրաւիրել: Լեռնային այլ կիրճներում, խորունկ ու ժոայլ, ուր անզուսպ լեռնավտակներն են քչքչում, ու մերկ քարերը կախ են ընկած. ուր փոքրիկ սոճիներն իրենց արմատներով հազիւ են մնում կպած, իսկ համեմատաբար ցածը կտրւածքներում մի քանի խրճիթներ են ցրւած՝ այնտեղ էլ ձեր աչքը դրաւում է մի մաքուր, սպիտակ քարաշէն տնակ, և նրա միջից դուք լսում էք մանկական ձայների առոյգ երգը.—դա գիւղական դպրոցն է: Զւիցերիայի մանուկը 6 տարեկանից իրաւունք է ստանում ուրախ—ուրախ դպրոց վագել: Դպրոցը քաղցրութեամբ նրան ընդունում է իր գիրկը երկար, երկար տարիներ, մինչև նրանից ազնիւ, գործունեայ ու շրջապատղ կեանքը լաւ հասկացող քաղաքացի կամէ: 1874 թւից Զւիցերիայում կրթութիւնը յայտարարւած է ձրի և պարտադիր: Կանտոնները համայնքների հետ միասին դպրոցների վրա տարեկան 40 միլիոն ֆրանկ են ծախսում (մօտաւորապէս մեր 15 միլիոն ըուբլին):

Շատ կանտոններում ու համայնքներում դպրոցական գումարներ կան, նրանցից ստացած տոկոսները դպրոցի վրա են գործադրւում:

1895 թւին այդ գումարների ընդհանուր քանակը 150 միլիոն ֆր. էր հասնում (մօտ. 60 միլ. ըուբլի): Ամեն տարի ժողովրդական կրթութեան ծախքը բաժանում է բոլոր քաղաքացիների մէջ զանագան կանտոններում 9 ֆր-ից մինչև 85 ֆր. (4 ր.—ց մինչև 35 ըուբլին): Այդտեղից երեսում է, թէ ինչպէս լուրջ են վերաբերում գլոցեց, բացիք ժողովրդական լուսաւորութեան գործին: Նախակըթական ուսումնարաններ 8500 հատ են, բացի այդ ամենափոքր երեխաների համար՝ 4—6 տարեկան, այսպէս կոչւած մանկական պարտէներ 725 հատ. Նրանց մէջ սովորում են 532,000 երեխաներ: Կան երկրորդ կարգի 500 դպրոցներ, 34,000 աշակերտներով. գիմնազիոն՝ 30 հատ, 9000 աշակերտներով և 177 տեխնիկական դպրոցներ: Պէտք է յիշել, որ այդ ահազին քանակութեան դպրոցները շինւած են մեր մի կամ երկու հահանգի չափ տարածութեան վրա: Հէնց այդտեղ, մի քանի ժամւայ ճանապարհի վրա կառուցւած են 5 համալսարան, 2 գիտութիւնների ճեմարան և 8իւրիխում հոյակապ պօլիտեխնիկուս, Եւրոպայի մէջ լաւագոյնը, 2 անասնաբուժական դպրոց և 38 ուսուցչական սեմինարիա: Զւիցերիայում զբաղարաններ հաշւում են 2000 հատ, 3,000,000 հատոր գրքով: Ամսագիր ու լրագիր եւրոպական բոլոր լեզուներով հրատարակւում են ազատ, առանց որևէ ցենզորական քոնութիւնների:

Զւիցերիայում բոլոր տօներն ու հանդէմները սերտ կապւած են դպրոցական կեանքի հետ. ժողովրդական բոլոր տօնախմբութիւններին աշակերտներն ամենաեռանդում մասնակցութիւն են ցոյց տալիս իրենց ուսուցիչների զեկավարութեամբ։ Նրանք յաճախ գիւղերի ու քաղաքների փողոցներով հանդիսաւոր թափօրներ են սարքում երաժշտութիւնով, երգերով, դրօշակներով։ Բոլոր անցորականները նրանց առաջ վերցնում են գդակները։ Զւիցերացիք պարծենում են իրենց դպրոցներով և նրանք իրաւացի են։ 100 տարի առաջ Զւիցերիայում ապրում էր նշանաւոր Հէնրիխ Պետալոցցին. նա իր ամբողջ հոգին չքառոր երեխանների կրթութեանն էր նւիրել և իր ամբողջ կեանքը երեխանների հետ անցկացրեց։ Դեռ ջահիլ հասակում, Ռուսսօի գրքերը կարդալով, նա խօսք աւեց իրեն, որ իր ամբողջ կեանքի ընթացքում գիւղացիների մէջ կմնայ։ Նրա ազնիւ սիրտն ամենից աւելի զգացում էր երեխանների բախտի առաջ. քաղցած, անապաստան, ամենավաղ մանկութիւնից նրանք մեծանում են առանց հսկողութեան ու ծնողների։ Համայնքում մի փոքր գումար հանգանակելով, Պետալոցցին սկսեց իր մօտ ժողովել ծ0-ի չափ երեխայ, և ոչ միայն զիր էր սովորեցնում, այլ և արհեստների էր վարժեցնում. նա ջանք էր թափում որբան հսարաւոր է ուսման մէջ աւելի պարզութիւն մտցնել. որպէս զի երեխաններն օրինակներով ուսումնասիրեն ի-

րենց շրջապատող բնութիւնը, երեխանների համար նա ժողովում էր փոքրիկ քարեր, չորացած բարոյսեր, վայրի մանր կենդանիներ և այլն։ Բացի դրանից Պետալոցցին մայրերի համար էլ գըրքեր գրեց և նրանց բացատրում էր, թէ ինչպէս պէտք է դաստիարակել երեխաններին, որ նրանց միտքը զարգանայ, կամքն ամրանայ և նրանցից արժանաւոր քաղաքացիներ դուրս գան։

Զւիցերիայում դպրոցը միանգամայն ազատ է. այդտեղ մանուկները սովորում են աշխարհագրութիւն, պատմութիւն, թւաբանութիւն, երկրաշիտութիւն, ուսումնասիրում են բնութիւնը, նըլկարում են, երգում են. սովորում են զանազան արհեստներ։ Աշակերտները յաճախ ուսուցիչների առաջնորդութեամբ ճանապարհորդութիւն են ձեռնարկում դէպի սարերը. ամեն տեղ նրանց ընդունում են ամենաթանգագին հիւրերի տեղ։ Կրօնի դասերը ոչ մի դպրոցում պարտաւորական չեն։

Զւիցերիայում ազատ դաւանում են թէ կաթօլիկութիւն և թէ բողոքականութիւն, և առհասարակ խղճի լիակատար ազատութիւն է. կրօնական ոչ մի պարտականութիւն չկայ զրած մարդու վրա. այստեղ ծէսեր են կատարում, Աստծուն ազօթում են ոչ թէ աշխարհական կամ հոգեոր կառավարութեան հրամանով, այլ միմիայն իւսենց խղճի հակումով։ Մարդուս հաւատը, նրա խղճի ու հոգու գործն է, ի՞նչպէս կարելի է զօրով մարդուն փաթաթել։

XVI դարում Զւիցերիան նոյնպէս կրօնական ուժեղ շարժումների ասպարէզ դարձաւ, ինչպէս և այն ժամանակները Դերմանիան. այդ շարժումները յայտնի են Վերածնութիւն անունով։ Կաթոլիկ հոգեորականութեան անբարոյականութիւնն ու շահատակութիւնները վաղուց արդէն ամենաշերմեռանդ հաւատացեալների մէջ էլ զգւանք էին յարուցել։ Կաթոլիկ եկեղեցու փչացածութեան դէմ կանգնեց բուռն եւանդով մանաւանդ գերմանացի կուսակրօն Լիւտերը. նա բարձր ու համարձակ մերկացրեց Հոռմի Պապի զեղծումները, ցոյց տւեց կաթոլիկ եկեղեցու գլխաւոր վարդապետութեան կեղծիք՝ Պապի անսխալականութեան առթիւ և նրա իրաւունքը ամեն յանցագործութիւն ու ոճիր ներել. արձակելը փողով։ Լիւտերի շուրջը շուտով այնքան բողոքականներ խմբւցին, — այսինքն կաթոլիկ եկեղեցու գլխաւոր հիմունքների դէմ բողոքողներ՝ որ նոր բողոքական եկեղեցու սկիզբը դրին. նրանք աշխատեցին այդ եկեղեցին հիմնել ճշմարտութեան սկզբունքների վրա, որքան հսարաւոր է մօտ լինել Յիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքին, ու գլխաւորապէս, Աւետարանին հետեւցին՝ Արդարութեան և Սիրոյ վարդապետութեանը։ Այդ նորոգւած քրիստոնէական ուսմունքը թափանցեց և Զւիցերիա, ուր եռանդով քարոզեցին մանաւանդ Ժընեվում Կալվինը, Յիւրիխում Յվինգին։ Վերջինս նշանաւոր խելքի տէր մի մարդ էր, ամեն անարդարութեան

ու կեղծիքի նըրազգաց, ազնիւ սրտով։ Նա սկսեց բարձրաձայն քարոզել, հրաւիրելով հաւատացեալ եղբայրներին թոթափել բոլոր կեղծն ու անբարոյականը և մաքուր սրտով դառնալ Աւետարանին. սա ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է ապրեն և վարւեն ճշմարիտ քրիստոնէաները։ Յվինգին մատնացոյց է անում նոյնպէս և Զւիցերիայի ժամանակակից հասարակական կեանքի բոլոր անարդարութիւնները, զայրանում է զւիցերական գումարտակների վարձկանութեան վրա, անւագում է այդ բանը զւիցերական արեան ստորև և զգւելի մի առեստուր, վրդովւում է հարստութեան դէմ, և ժողովրդին հրաւիրում է քրիստոնէաների նախնական կեանքի հաւասարութեանն ու պարզութեանը։ Վերածնութիւնն սրագութեամբ տարածւեց ամբողջ Զւիցերիայում, սակայն ոչ առանց զինւած ընդդիմագրութեան կաթոլիկների կողմից։ Այդպիսի մի կուտում Յվինգին սպանւեց, Յվից նըրա ուսմունքը երկար ապրում էր Զւիցերիայի հիւսիսային մասում։ Տարէց տարի զւիցերիացիների մէջ աւելի ու աւելի է տարածւում ընդդիմագրութիւնն այն մտքով, թէ մարդիկ իւղանց իսկական հաւատը այս կամ այն ծէսերով չեն արտայայտում, այլ որպէս հոգու աւանդ, ուսահում են իրենց սրսի խորքում։
Զւիցերիայի փողոցներում զինւած մարդ չէք տեսնի, զինւոր կամ սպայ—Զւիցերիան մըշշական գօրք չունի, և խաղաղ ժամանակ նրան տական

պահելը երկրի վրա չի ծանրանում իբրև այնքան
դժւար ու աւելորդ բեռ։ Սակայն բոլոր քաղաքա-
ցիք զէնք գործածել գիտեն և Զւիցերական դաշ-
նակցութիւնը ամեն լոպէ կարող է հանդէս բե-
րել հիանալի զօրք, որ մինչև արեան վերջին կա-
թիւլը պատրաստ է պաշտպանել իր հայրենիքը։
Իսկ խախաղ ժամանակ այդ զինւորները բոլորն
աշխատում են, ամեն մէկն իր տանը իր գործին
է, և ոչինչ կարևորութիւն չկայ, որ տամնեակ
հազարաւոր մարդիկ անզործ ապրէին, ոչինչ շահ
չբերելով երկրին և դեռ նրա հաշւին և կերա-
կրւէին ու հագնւէին։ Ոչ, Զւիցերիայում վաղուց
են հասկացել մշտական զօրքի ամբողջ չարիքը
և ոչ մի անհրաժեշտութիւն չեն տեսնում նրա-
նում։ Ամեն զւիցերացի, 20-ից մինչև 50 տարին,
իւրաքանչիւր տարւայ մէջ երկու շաբաթով կան-
չում է զինւորական վարժութիւնների, որ զին-
ւորական ծառայութիւնը վերջացնի։ Եւ զրանով
ամեն բան վերջանում է։ Հաշւում են որ զւիցե-
րացի զինւորը 10 տարւայ մէջ այդ վարժութեան
տափս է 125 օրից ոչ աւելի, որը իհարկէ, չի խան-
գարում, որ նա լինի պրօֆեսօր, վաճառական,
բանաւոր։ Ամեն կանոն, քաղաքում զօրավար-
ժութեան հրապարակ ունի, ուր քաղաքացիք զին-
ւորական արւեստն են սովորում, քայլել, կրակել
և այլն։ Պօլիտեխնիկական ինստիտուտի ուսանող-
ները պիտաւորապէս թնդանօթածիգ գունդն են
կազմում։ Քաղաքի հրապարակում խմբւում են

ազգականներն ու ծանօթները և կենդանի հետա-
քըքրութեամբ հետևում վարժութիւններին։ Մի
կողմում նախաճաշիկ ու զովացնող խմբէքներ են
պատրաստում։ Հարբածներ չկան այդտեղ, ինչպէս
և չկան ամբողջ Զւիցերիայում։

Զւիցերիայում մարմնամարզութիւն շատ են
սիրում, տօն օրերին երիտասարդները միշտ մըք-
ցում են իրենց ուժով ու ճարպկութեամբ. առաջ-
կարուեկի վազքեր սարքում, նշանի կրակում, գըն-
գակով խաղում և այլն։ Այդպիսի հանդէսների մաս-
նակցում են նոյնպէս և աշակերտները։ Թմբկահա-
րելով, երսից շտական սեփական խմբով ու երգիչ-
ներով, գեղեցիկ զրօշակները բռնած երևում են
զանազան խմբեր ու գումարտակներ քաղաքի հը-
րապարակի վրա։ Քաղաքացիք այնտեղ նրանց
սպասում են։ Փոքրիկներին հիւրասիրում են կօն-
ֆէտներով, իսկ մեծերին զանազան մրցանակներ
ու պարզեներ են բնծայում ուղիղ կրակելու հա-
մար, և այլն։ Փոխագարձ սիրալիրութիւնը, հա-
ւասարութիւնն ու բարեկրթութիւնը բոլոր հան-
դէսներին տալիս են աշխուժութիւն և վայելուչ
կարգ ու կանոն։ Փողովքական տօնախմբութիւն-
ների ժամանակ սարերի վրա միշտ կրակներ են
ցրում։ Գեղեցիկ լուսաւորում են սրանք մութ-
ժայուերը, և բովանդակ Զւիցերիան, կարծես փո-
խագարձաբար ողջագուրում է այդ կրակներից։
Գեղեցիկ ու առանձին շուքով տօնում են իրենց
ազատութեան տարեգարձը։ 1892 թին ամբողջ
Զւիցերիան տօնեց արգէն իր ազատութեան 600
ամեակը։ Նրա առոյդ, աշխատասէր ազգաբնա-
կութիւնը բոլոր ազգերի համակրանքն է վայելում
իր առաքինի ազնւութեան, բարեխիղճ ու մաքուր

յատկութիւններով։ Իր յաւիտենական լեռների ու
նրանց ստորոտների շուրջը փայլող լճերի չքնաղ
շրջանակի մէջ՝ Զւիցերիան մեզ հիանալի խրա-
տական օրինակ է տալիս. երեք ազգ են, երեք
լեզով խօսող, ու ապրում են ազատ ընկերական
դաշնակցութեամբ, չճնշելով ոչ մի ազգի, ոչ մի
կանոնի իրաւունքները։ Գիտակցական ժողովը ը-
դական ինքնավարութիւնը ամեն մէկին ազատու-
թիւն է տալիս, ամեն հասկացող մարդու մասնա-
կից է անում հայրենի երկրի կառավարութեանը,
և այդ հասկացողութիւնը տրում է ընդհանուր
կրթութեամբ։

Զւիցերացիք աչքի են ընկնում ջերմ սիրով
դէպ իրենց հայրենիքը. սիրոյ այդ զգացումը դէպի
հայրենի հողը Զւիցերիայի իւրաքանչիւր քաղա-
քացու դարձնում է հերոսու խիզախ մարտնչող,
հէնց որ նա իր հայրենիքը վասնգի շէմքին է ե-
րևակայում։ Խակ այդ սէրն առ հայրենիքը առաջ
է զալիս ամբողջ հասարակական և պետական
կեանքին դիտակցաբար մասնակցելովը, որ մատ-
չելի է բոլոր քաղաքացիներին ամենավաղ երի-
տասարդական հասակից։

Զւիցերական կանոնների Պատմութիւնը
կամ Ֆէդէրացիան պարզ ցոյց է տալիս, որ այն
Տէրութիւնն է միայն ամուր եւ ներքին յեղափո-
խութիւններից ապահով՝ որի բոլոր ժողովուրդը
անմիջական մասնակցութիւն ունի օրէնսդրու-
կան գործութեանը եւ ինքն է ընտրում իր
ամբողջ կառավարութիւնը։

Վ Ե Բ Զ



Յովհաննիս Գյորեանի հրատարակութեամբ լրի
են ՏԵՂԵԿ

1. Ա. Գօրկիյ, Մակար Զուղբա, թարգմ. Ա. Բարիեան 10 լ.
2. Ա. Բարիեան, Բանաստեղծութիւններ. 20 լ.
3. Լ. Անդրէս, Անդրէնզը, թարգմ. Ա. Բարիեան 10 լ.
4. Վ. Նազարյան, Լորի-да Լորի. Հայերէնից Վ. և Ա. Բարիեաններ 12 լ.
5. Մօպառան, Միկեանը, թարգմ. Ա. Տէր-Անահանն 1 ր. —
6. ~~Անդրէս, Պատմական~~. Կոսочекъ хлѣб-ца, Պѣтухъ, թարգմ. Հայերէնից Վ. Բարիեան 10 լ.
7. Ա. Աննենկովյա, Հանրապետութիւն թարգմ. Ա. Տէր-Անահանն 5 լ.
8. Ա. Բերեկ, «Քրիստոնէութիւնը և սոցիալիզմը» թարգմ. Ա. Տէր-Անահանն 10 լ.
9. Ա. Ռուսօվա «Զախերիա ազատ ժողովրդական համապետութիւն» թարգմ. Ա. Տէր-Անահանն 15 լ.

Գի՞նն է 20 դրամ.

Դիմել հրատարակչին--Армянскъ (Таврической губерн.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրավածառներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0192159

